




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8952

Լ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 18

Պրոլետարներ բար յերաների, միացե՛ք!

Փ. ՍՎԵՏԼՈՎ. ՅԵՎ. Ը. ԲԵՐԴՆԻՎՈՎ.

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԵԶ ՄՏՆՈՂ
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲԱՆՎՈՐ

ՅԵՐԵՎԱՆ
1924

3KՈ4
Ա-84

24 SEP 2006
09 DEC 2009

ՅԿՈՎ

U-84

պր.

Պրոֆեսորների բոլոր յեղիքների, միացե՛մ

Փ. ՍՎԵՏԼԱՎ. ՅԵՎ. Ը. ԲԵՐԻՆԵԿՈՎ

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ

1003
19396

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ՄԵՋ ՄՏՆՈՂ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲԱՆՎՈՐ

—••••—

300

1608

ՅԵՐԵՎԱՆ
1924

1. ԻՆՁՊԵՍ Ե ԿՈՉՎՈՒՄ ԱՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐԻ ՄԵՋ ՄԵՆՔ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ

Սոցիալիստական խորհրդային Հանրապետությունների
Միություն, համառոտաժ — Ս. Խ. Հ. Միություն:

2. ՈՒՄ Ե ՊԱՏԿԱՆՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ Ս. Խ. Հ. ՄԻՈՒ- ԹՅԱՆ ՄԵՋ

Խորհրդային Հանրապետություններում իշխանություն-
ներ պատկանում են Խորհուրդներին:

Բոլոր աշխատավորները և ուրիշի աշխատանքներ
չշահագործողները, — բանվորները, գյուղացիները, կարմիր
բանակայինները, պաշտոնյաները և այլն, — Խորհուրդների
միջոցով մասնակցում են Խորհրդային պետության կա-
ռավարությանն ու այդպիսով լավագույն հնարավորու-
թյունը ստանում պաշտպանելու իրենց շահերը:

Խորհուրդների միջոցով իրականանում է Խորհրդային
իշխանության հիմքը կազմող բանվորության և աշխատա-
վոր գյուղացիության միությունը:

Այդ միության մեջ ղեկավարությունը պատկանում է
պրոլետարիատին ու նրա կուսակցությանը, — կոմունիս-
տական կուսակցությանը (բոլշևիկներին), — Ռ. Կ. Կ. (բ),
վոր միացնում է բանվորների և գյուղացիների ավելի ա-
ռաջագեմ, գիտակից ու զործոն խավերին:

Կոմունիստական կուսակցությունը, իր կոմունիստա-
կան ֆրակցիաների (բշիջների) միջոցով Խորհուրդներում
և Խորհուրդների համագումարներում ղեկավարում է Խոր-
հրդային իշխանության քաղաքականությունն ու շինա-
րարությունը:

3. Ո՞ՒՄՆԻՅ Ե ԿԱԶՄՎԱԾ Ռ. Կ. Կ. (Բ)

Ռ. Կ. Կ. (Բ) միջուկը կազմում են հին, փորձված բանվոր հեղափոխականները, փորձեղ գեղ մինչև 1917 թ. հեղափոխությունը, սասնյակ տարիներ շարունակ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ու ղեկավարությամբ անդադար կռիվ էյին մղում ցարիզմի, կալվածատերերի և կապիտալիստների դեմ, պաշտպանելով բանվոր դատակարգի շահերը:

Բոլշևիկական այդ հին զվարդյան այժմս էլ կանգնած է կուսակցության գլխին և ղեկավարում է նրա քաղաքականությունն ու աշխատանքը: Այդ փորձված միջուկի շուրջը համախմբվում են հարյուր հազարավոր առաջագեղ, գիտակից և գործոն բանվորներ ու գյուղացիներ, փորձեղ կուսակցության շարքերն են մտել 1917—1920 թ.թ. արտաքին ու ներքին պահպան ճակատներում տեղի ունեցող կատաղի կռիվների ժամանակ:

Մեր կուսակցության ճնշող մեծամասնությունը կազմում են բանվորները (46⁰/₀) և գյուղացիները մոտ (24⁰/₀), փորձեղ թիվը հասնում է (առ 1-ն հունվարի 1924 թ.) 380 հազարի: Կոմունիստական կուսակցության մեջ փոքրաթիվ քանակով մտնում են պաշտոնյաներ ու ինտելիգենցիա: Կուսակցությունը իր շարքերը բանվորներով խտացնելու համար ձեռք է առնում բոլոր միջոցները:

Մեր կուսակցության ղեկավար Վ. Ի. Լենինի մահից հետո ղեկի կուսակցության շարքերը գիմոց յերկու հարյուր հազար զազգյահի բանվորների հոսանքն էլ ավելի է ուժեղացնում մեր կուսակցության բանվորական, պրոլետարական բնույթը:

4. ՎՈ՞Ր ԴԱՍԱԿԱՐԳԻ ԳԼՈՒԽ ԿԱՆԳՆԱԾ Ե ՎԱՐՈՒՄ ԻՐ ՊԱՅՔԱՐԸ ԿՈՄՈՒՆԻՍՏ. — ԲՈՒՇԵՎԻԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Կոմունիստական-բոլշևիկական կուսակցությունը հանդիսանում է բանվոր դատակարգի՝ կապիտալի դեմ մղած

հեղափոխական պայքարի առաջագահն ու առաջնորդը: Միաժամանակ կուսակցությունը ղեկավարում է բանվորության առողջա կարիքների համար մղած պայքարը և միջոցներ ձեռնարկում էլ ավելի բարվոքելու բանվոր դատակարգի գրությունը:

Ահա թե ինչու բանվորները կազմում են բոլշևիկական կուսակցության հիմնական ղեկավար միջուկն ու պատվանդանը: Ահա թե ինչու կուսակցությունը ձգտում է իր շարքերը փոշ միայն էլ ավելի հարստացնել բանվորներով, այլև կուսակցության մեջ նրանց ղեկավարող գիրքեր հատկացնել և ուժեղացնել նրանց ազդեցությունը կուսակցության ամբողջ քաղաքականության ու աշխատանքի, իսկ վերջինիս միջոցով նաև՝ խորհրդային պետության վրա:

5. ԲՆՋՊԵՍ ԵՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ԲՈՅԼՇԵՎԻԿՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ

Մեր կուսակցությունը բանվորական-պրոլետարական կուսակցություն է: Սակայն այդ չի նշանակում թե մեր կուսակցությունը անտարբեր է դեպի չքավոր և միջին գյուղացիության շահերն ու կարիքները:

Բոլշևիկները Վ. Ի. Լենինի գլխավորությամբ դեռ մինչև առաջին հեղափոխությունը (1905 թ.) ասում էյին՝ աշխատավոր գյուղացիությունը, փոր չի սպրդում ուրիշի աշխատանքը շահագործելով, այլ ընդհակառակն, ինքն է շահագործվում ու հարստահարվում կապիտալիստներից, կալվածատերերից ու գյուղի համիտաներից, հանդիսանում է բանվոր դատակարգի անհրաժեշտ դաշնակիցը:

Վլադիմիր Իլիչը 1905 թ. սովորեցնում էր, փոր կուսակցությունը ուժեղ կերպով պիտի աշխատի գյուղացիության մեջ. նրան պիտի քաշի ու մասնակից դարձնի պրոլետարիատի հեղափոխական պայքարին, կալվածատե-

րերի դեմ նրա սկսած շարժումներին նեցուկ հանդիսանալ, միևնույն ժամանակ չմթափնելով գյուղական համայնների և աղքատ գյուղացիության միջև գոյութիւն ունեցող դասակարգային հակասութիւնները:

1917 թ. հեղափոխութեան և խորհրդային իշխանութեան ժամանակ, մեր կուսակցութեանը հաջողվեց Վ. Ի. Լենինի ղեկավարութեամբ գործնականում իրականացնել բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիութեան այդ մարտական-քաղաքական դաշինքը, վորի հետեանքով 1917 թվից, մեր կուսակցութեանը դառնում է նաև աղքատ ու միջին գյուղացիութեան ղեկավարը: Այդպիսով մեր կուսակցութեանը ստանձնում է գործնականում իրականացնում է վոչ միայն բանվոր դասակարգի, այլև Ս. խ. Հ. Միութեան բաղամիլիոն աշխատավոր գյուղացիութեան բազմատեսակ շահերի ու կարիքների պաշտպանութեան գործը:

6. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑ ՈՒ ԶԱՐԳԱՑԱՎ Ռ. Կ. Կ. (Բ)

Ռուսաստանում դեռ անցյալ դարու յոթնամյակական թվականների կեսերին առաջին անգամ ծնունդ առան բանվորական ինքնուրույն գաղտնի կազմակերպութիւններ ու խմբեր, նպատակ ունենալով ղեկավարել բանվորութեան պայքարը ցարական ինքնակալութեան և կապիտալիստների տիրապետութեան դեմ:

Սակայն, միայն 90-ական թվականների վերջին (1898 թ.) տեղի յե ունենում այդ կազմակերպութիւնների ներկայացուցիչների առաջին համագումարը, վորը և մեր կուսակցութեան հիմքն է դնում: Սկզբում, մի շարք տարիների ընթացքում (մինչև 1912 թ.) նրա շարքերում էլին զանազան վոչ միայն հեղափոխական-պրոլետարական, այլև համաձայնողական ու մանր-բուրժուական տարերը, վորոնք հետագայում անցան բացարձակ հակահեղափոխութեան բանակը (մենշևիկները):

Հեղափոխական-պրոլետարական բոլշևիկյան ուղղութեան բացահայտ անջատումը Վ. Ի. Լենինի ղլխավորութեամբ, տեղի ունեցավ 1903 թվին, մեր կուսակցութեան յերկրորդ համագումարում: Այդ համագումարից ել սկսվում է բոլշևիկների ու մենշևիկների միջև մղվող համառ պայքարը և ծնունդ են առնում «բոլշևիկ» ու «մենշևիկ» անունները: Այս անունների առաջ գալն ել հետեանք է այն բանի, վոր յերկրորդ համագումարում մեր կուսակցութեան պրոլետարական, հեղափոխական մասը Վ. Ի. Լենինի ղլխավորութեամբ մեծամասնութիւն էլին կազմում: Ինչ վերաբերում է անջատման, — այդ ել սկսվում է հենց յերկրորդ համագումարից: Տարաձայնութիւնները տեղի էլին ունենում կազմակերպչական հարցերի շուրջը, — թե՛ ում պիտի համարել կուսակցութեան անդամ և ընդունել նրա շարքերը: Վաղեմիւր Իլյիչ Լենինը պահանջում էր, վոր կուսակցութեան անդամը, բացի կուսակցութեան ծրագիրն ընդունելուց և նյութական աջակցութիւն ցույց տալուց, այլև կուսակցութեան վորևէ կազմակերպութեան մեջ պիտի անձնական մասնակցութիւն ունենա և խստիւ յենթարկվի կուսակցական ղլսցիւլինայի: Վաղեմիւր Իլյիչը իր այդ պահանջով մեր կուսակցութիւնից վճռեց, մանավանդ ինտլիգենցիայի շարքերից, բոլոր տատանվողներին ու անվճռականներին: Այդպիսով, Վաղեմիւր Իլյիչը հիմք դրեց իր գործի համար մինչև վերջը պայքարելու պատրաստ, ղիսցիւլինայի յենթակա պրոլետարական-հեղափոխական կուսակցութեան:

Ընդհակառակը, մենշևիկները կուսակցութեան դռները լայն բացին բանվոր դասակարգին ոտար մանր-բուրժուական, մանավանդ ինտելիգենտական շրջաններից, անկայուն տարրերի առաջ: Հետագայում տարաձայնութիւններն ու պայքարը բոլշևիկների և մենշևիկների միջև անխուսափելիորեն զարգացան: 1905 թ. հեղափոխութեան ժամանակ բոլշևիկները կողմնակից էլին բանվոր դասակարգի և

գյուղացիութեան միութեանը և պրոլետարիատի ու հեղափոխական գյուղացիութեան գիկտատուրային: Մենշևիկները պաշտպանունում եյին բուրժուազիային և դեմ՝ եյին բանվոր դասակարգի հեղափոխական իշխանութեան: 1914 թվի իմպերալիստական պատերազմի ժամանակ բոլշևիկները Վ. Ի. Լենինի գեկավարութեամբ պայքարում են իմպերալիստական պատերազմի դեմ և ձգտում այն քաղաքացիական կռիւ փոխելու, այսինքն, բուրժուազիայի իշխանութեանը անհապաղ տապալելու և պրոլետարիատի գիկտատուրա հաստատելու համար: Մենշևիկներն ընդհակառակը՝ պաշտպանում են պատերազմը և կոչ անում աջակցելու ռազմական — կապիտալիստական և կալվածատիրական կառավարութեաններին: 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխութեան ժամանակ մենշևիկները բացարձակորեն անցնում են հակահեղափոխութեան և մասսաներից մերժված կապիտալիստների ու կալվածատերերի կողմը և այդ ժամանակից բուրժուազիայի հետ դաշնակցած ամբողջ ժամանակ կռվում են խորհրդային իշխանութեան և մեր կուսակցութեան դեմ: Սրա հետեանքը այն է լինում, վոր բոլշևիկյան կուսակցութեան շուրջը համախմբվում են վոչ միայն առաջավոր հեղափոխական-պրոլետարական տուրերը, այլ և բանվոր դասակարգի ճնշող մեծամասնութեանը: 1918 թ. Հոկտեմբերյան հեղափոխութեանից հետո, 7-րդ համագումարում, մեր կուսակցութեան ընդունումն իր ներկա՝ Ռ. Կ. Կ. (Բ) անունը, նախկին՝ Ռ. Ս. Դ. Բ. Կ. (Բ) — (Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան (բալշևիկները) անվան փոխարեն: Մեր կուսակցութեան կոմունիստական վերանվանելու նպատակն է մի կողմից ընդգրկել մեր կապերի կատարյալ խզումը համաձայնողական և հակահեղափոխական մենշևիկի հետ, իսկ մյուս կողմից ընդգծելու իր անմիջական և ուղղակի կապը այն հեղափոխական կոմունիստական կուսակցութեան հետ, վորի հիմնադիրներն ու առաջնորդներն եյին 1848 թ. Կ. Մարքսը և Ֆ. Ենգելսը:

7. ԻՆՉ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՅԵ ԿԱՌՈՒՑՎԱԾ Ռ. Կ. Կ. (Բ)

Բոլշևիկները կուսակցութեանը միշտ յեղել է և շարունակում է լինել հեղափոխական գործի կուսակցութեան, տասնյակ և հարյուրավոր միլիոն մասսաների պայքարի և շինարարութեան գեկավարը և վոչ թե կուսակցական հարցեր քննող համախոհների մի հասարակ միութեան: Ու այդպիսով մեր կուսակցութեան պայքարն ու աշխատանքը միշտ ընթացել է և առաջիկայում էլ, մինչև կապիտալիզմի վերջնական պարտութեանը, ընթանալու յե մեր դեմ ամեն տեսակ միջոցներով ու ճանապարհներով անընդհատ կատաղի կռիվ մղող ամբողջ բուրժուական աշխարհի մեջ թշնամի ուժերի կրակի տակ:

Ահա թե ինչո՞ւ Վ. Ի. Լենինի առաջին պատգամը՝ կուսակցութեան կառուցման խնդրում — այդ նրա ներքին ռազմական ամբողջութեան ապահովումն և և յերկաթյա դիսցիպլինան կուսակցութեան շարքերում, վարից վեր յուրաքանչյուր անդամի և կուսակցութեան առանձին կազմակերպութեանների նկատմամբ:

Առանց ներքին ալգալիսի ամբողջութեան և առանց իր շարքերում ունենալու ալգալիսի խորագույն դիսցիպլինա, կուսակցութեանը անկարող պիտի լիներ իր ընթացքի ամենածանր պայմաններում հաղթահարել բոլոր խոչընդոտները, կառավարել խորհրդային պետութեանը և բանվորական ու գյուղացիական մասսաներին գեպի նորանոր հաղթանակներ առաջնորդել:

Կուսակցական դիսցիպլինա՝ նշանակումն փոքրամասնութեան յենթարկվելը մեծամասնութեան ու կուսակցութեան վարի մարմինների յենթարկվելը վերիններին:

Կուսակցութեան անդամները և առանձին կազմակերպութեանները իրավունք և պարտականութեան ունեն քնննութեան առնելու կուսակցութեան քաղաքականութեան և աշխատանքի հարցերը ու մասնակցելու նրանց վորոշմանը, բայց միևնույն ժամանակ պարտավոր են իսկութեամբ և հր-

նարավորին չափ արագ կատարելու կուսակցության ղեկավար մարմինների վորոշումները (կոմիտեների, բյուրոների, քարտուղարության): Վերջիններս, վորպես ընդհանուր որենք, կազմվում են վարից վեր ընտրությամբ ու հաշվետու յեն իրենց ընտրողների առաջ և միայն վորպես բացառություն թույլատրելի յեն մի քանի սահմանափակումներ ընտրության նկատմամբ (որինակ՝ քարտուղարների ընտրության ժամանակ կուսակցական վորոշ ստափ ի նկատի ունենալու պարտավորությունը, ընտրված քարտուղարների հաստատելը վերին կոմիտեների կողմից և այլն):

Կուսակցության բոլոր որգանները (սկսած Կ. Կ-ից մինչև բյուրոներն ու բջիջների քարտուղարները) հանդիսանում են վոչ միայն առանձին վորոշումների իրազործողներ, այլև ղեկավարներ կուսակցության քաղաքականության, պատասխանատու իրենց ղեկավարած կազմակերպության և ամբողջ կուսակցության դրությամբ ու աշխատանքի համար:

Միաժամանակ կուսակցությունը առանձին ուշադրություն և դարձնում կուսակցական ապարատների (կոմիտեների և այլն) ստեղծման, ամրապնդման և բարելավման վրա, վորոնք զործնականում ծառայում են կուսակցության քաղաքականության ու աշխատանքի կիրառման համար անհրաժեշտ որգաններ:

Կուսակցության գերագույն որգանը հանդիսանում է տարեկան մեկ անգամ հրավիրվող համակուսակցական համագումարը, իսկ համագումարից մինչև հաջորդ համագումարի ժամանակամիջոցում կուսակցության ղեկավարն է հանդիսանում Ռ. Կ. Կ. Կ. Կ. (բ), վորը և պատասխանատու յեն կուսակցության ամբողջ քաղաքականության ու աշխատանքի համար:

Ռ. Կ. Կ. (բ) ամբողջովին, վորպես Ս.Ս.Հ. միության կոմունիստական կուսակցություն, հանդիսանում է համաշ-

խարհային կոմունիստական կուսակցության—կոմունիստական Խնտերնացիոնալի—բաղկացուցիչ մասը և մյուս պետությունների կոմունիստական կուսակցությունների հետ միասին յենթարկվում է կոմիտեների կոնգրեսների (համագումարների) և նրա գործկոմի կարգադրություններին ու վորոշումներին:

Տ. ԻՆՁԵՍ Ռ. Կ. Կ. (Բ) ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱՎ

Մինչև 1917 թ. յերկար տարիների ընթացքում բոլշևիզմիկները կուսակցությունը յիդել է հետապնդվող և զաղտնի կուսակցություն. և Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ նրա աշխատանքն ուղղված է յեղել բանվոր դասակարգի և հեղափոխական գույրացիության հաղթական ապստամբությունը պատրաստել ընդդեմ ցարիզմի, կապիտալիստների և կալվածատերերի լծի:

Այդ պայքարը իր գագաթնակետին հասավ յերկրորդ հեղափոխության ժամանակ, 1917 թ. մարտից մինչև հոկտեմբեր: 1917 թ. սկզբներին ցարիզմի անկումը ամենաուժեղ թափով հեղափոխական շարժում առաջացրեց մասսաների ամենալայն խավերում, վորոնք անմիջապես հետևեցին Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ հրապարակ նետած մեր կուսակցության լոզունգներին ու գործելակերպին: 1917 թ. ապրիլին Վ. Ի. Լենինը մեր կուսակցության և հեղափոխական բանվոր դասակարգի առաջ յրեց պայքարի նոր խնդիրներ ու լոզունգներ, ինչպես՝ պրոլետարիատի սոցիալիստական հեղափոխություն ու պրոլետարիատի ղեկառուութա խորհուրդների իշխանություն յեվ իանրսպետություն, վերջ տալ համաշխարհային պատերազմին և հեղափոխական պայքար խաղաղության համար, հողը գյուղացիության, բանվորական պետության շինարարություն, ցա-

րական ուսաստանի մեջ մտնող բոլոր ազգերին ինքնորոշման (ինքնուրույն անորինում) և մինչև իսկ կատարյալ անջատման իրավունք, III կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծում: Բոլշևիկների կուսակցությունը այս խնդիրների հաղթանակի համար պայքար էր մղում մենակ ու վճռական կերպով, իր դեմ ունենալով բոլոր բուրժուական և համաձայնողական (մենշևիկների և եսերների) կուսակցությունների միացյալ բանակը:

Շնորհիվ իր վարած այս պայքարի, 1917 թ. սեպտեմբերին ու հոկտեմբերին — բոլշևիկների կուսակցությունը, Ռուսաստանի բանվորական և գյուղացիական մասսաներին վերջնականապես կորզում է բուրժուական ու համաձայնական կուսակցությունների ազդեցությունից, նվաճում հեղափոխական լայն մասսաների վստահությունը, նրանց կռվի տանում, հոկտեմբերյան հեղափոխությամբ հաղթանակում ու այդ ժամանակվանից էլ դառնում կառավարական կուսակցություն: Հոկտեմբերյան հաղթական հեղափոխությունը մեր կուսակցությանը հանձնեց խորհրդային իշխանության գեղը՝ վորպես խորհրդային հանրապետության կառուցողի և զեկավարի:

Գ. ԻՆՉ ԵՐ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունը փոշ միայն մեր յերկրի, այլև ամբողջ մարդկության պատմության նոր դարաշրջանի սկիզբն է: Հոկտեմբերյան հեղափոխությունը բանվոր դասակարգի և հեղափոխական գյուղացիության հաղթական ապստամբությունն էր ընդդեմ Ռուսաստանի կապիտալիստների և կալվածատերերի: Այդ ապստամբության յեռանդով խորտակվում է կապիտալիստների և կալվածատերերի պետությունը և ստեղծվում է նոր, բանվորա-գյուղացիական խորհրդային իշխանություն: Խորհրդային իշխանությունը, իր հաղթանակից հետո, յերկիրը

ազատում է քառամյա իմպերիալիստական պատերազմից, գյուղացիությունը հող տալիս, հիմնովին փոխհասցնում ցարական — ճարտարական կարգերի հին մնացորդները (դասակարգերն ու նրանց արածնությունները, փոշ ուսածղավալների ճնշումն ու շահագործումը, կանանց իրավազրկությունն ու ճորտացումը, յեկեղեցու տիրակալությունը դպրոցում, պետություն մեջ և այլն) և հաջողությամբ ձևնամուխ լինում բանվորական պետության կառուցման:

Այսպիսով, հոկտեմբերյան հեղափոխությունը՝ աշխարհում առաջին պրոլետարական հաղթական հեղափոխությունը՝ հիմնեց խորհրդային իշխանություն, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի ամենալավագույն ձև:

Մինևոյն ժամանակ Հոկտեմբերյան հեղափոխությունը հարվածում է ամբողջ կապիտալիզմին, նրա համաշխարհային տիրապետության պատնեշը ձեղքում և համաշխարհային պրոլետարական հեղափոխության սկիզբը դնում:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի հետևանքով աշխարհի ^{1/6} մասը կազմող խորհրդային հանրապետության տերիտորիայի վրա աշխատավոր մասսաները ազատագրվելով կապիտալի իշխանությունից, պատմության մեջ առաջին անգամ հնարավորություն են ստանում կազմակերպել նոր հասարակություն և կյանքը դասավորել հոգուտ իրենց շահերի:

Մյուս կողմից՝ խորհրդային իշխանության հաղթանակով մեր կուսակցությունը ուժեղ ազդեցություն ձեռք բերեց Արևելքի և Արևմուտքի բուրժուական-կալվածատիրական պետությունների հեղափոխական և կոմունիստական կուսակցությունների վրա — արագացնելով այդ յերկրներում հեղափոխության և պրոլետարական դիկտատուրայի իրագործումը:

Այստեղից է սկիզբն առնում համայն աշխարհի բանվոր դասակարգի և աղքատ գյուղացիության վրա հոկ-

տեմբերյան հեղափոխութեան և խորհրդային Հանրապետութեան թողած խոշոր հեղափոխական ազդեցութիւնը, այստեղից և սկզբնավորվում և այն ատելութիւնը, վորով լցված բոլոր կապիտալիստական յերկիրները՝ պայքարել են և անընդհատ շարունակում են պայքարել մեր դեմ:

10. ՎՈՐ ՇԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ Ե ԿՈՉՎՈՒՄ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ

Պրոլետարական և կոչվում այն հեղափոխութիւնը, վորով բանվոր դասակարգը տապալում և կապիտալիստներին ու կալվածատերերին և իրեն ու ամբողջ աշխատավոր մարդկութեան կապիտալի տիրապետութիւնից լիովին ազատագրելու նպատակով հիմնում իր իսկ բանվորական տիրապետութիւնը:

Այդպիսի հեղափոխութիւն եր և 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխութիւնը մեզնում, վորը, բոլշևիկների կուսակցութեան և նրա առաջնորդ Վ. Ի. Լենինի ղեկավարութեամբ կատարեց բանվոր դասակարգը հեղափոխական գյուղացիութեան հետ միասին:

11. ԻՆՉ Ե ՊՐՈԼԵՏԱՐԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Պրոլետարիատի դիկտատուրան—դա բանվոր դասակարգի իշխանութիւնն է, վորը ծնունդ է առնում հաղթող պրոլետարիատի հեղափոխութիւնից, վորը պահպանվում և պրոլետարիատի բռնութեամբ (բուրժուազիայի վրա) և վոչ մի առնչութիւն չունի հին որեքների հետ: Բանվոր դասակարգն այդ իշխանութեամբ ոգտվում և կապիտալիստներին ու կալվածատերերին վճռականորեն ու վերջնականապես ճնշելու և բանվորական պետութեան շինարարութեան համար (կալվածատերերից հողերը և բուրժուազիայից գործարաններն ու ֆաբրիկանները խլելու ճանապարհով և այլն):

Պրոլետարիատի դիկտատուրա նշանակում է—բռնութեամբ ճնշել շահագործողներին, —այսինքն ազգաբնակչութեան փոքրամասնութեանը՝ հանձինս կապիտալիստների և կալվածատերերի, —և անողոր կռիվ այն բոլորի դեմ, վորոնք կփորձեն վերականգնել իրենց նախկին իշխանութիւնն ու հարստութիւնը:

Պրոլետարիատի դիկտատուրա աշխատավորութեան լայն մասսաների համար, քնդհակառակը, նշանակում է, —հնարավորութիւն իրենց կենցաղի հաստատուն բարդավաճման և այն ազատութիւններով և իրավունքներով ոգտվելը, վորպիսիք աշխատավորութեան համար չեն յեղել և չկան վոչ մի բուրժուական պետութեան մեջ:

Այդպիսի դիկտատուրա մեզանում հաստատվել է հոկտեմբերյան հեղափոխութիւնից և այն ժամանակվանից, հանձին խորհրդային իշխանութեան, շարունակ ամբապնդվում է:

Դիկտատուրա խոսքը նշանակում է անմիջականորեն ուժի վրա հեռված որեքներով չկաշկանդված իշխանութիւն: Այդպիսի իշխանութիւն հաստատվում է տիրող դասակարգի իշխանութեան սպառնացող ալեհալոտ առանձին վտանգների ու դժվարութիւնների ժամանակ: Տիրող դասակարգը հենվելով դիկտատուրայի վրա, իր կաժքն է թելադրում իրեն թշնամի դասակարգերին: Դիկտատուրան տիրող դասակարգին անհրաժեշ է իշխանութիւնը իր ձեռքում պահելու և այն հոգուտ իր դասակարգային շահերին ոգտագործելու համար (որինակ՝ բուրժուազիայի համար դիկտատուրան պետք է պրոլետարիատին ճնշելու, ջախջախելու և կապիտալիզմը պահպանելու համար):

12. ԻՆՉՊԻՍԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՅԻՆ ԿԱՆԳՆԱԾ ՅԵՎ ՄԱՍԱՄ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԼԻՆԵԼ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ ՇՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՇԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԵՏՈ

Առաջին.— Համաշխարհային դրութիւնից բղխող զըժ-

վարություններ: Խորհրդային հանրապետութիւնը աշխարհում առկա վրին միակ բանվորական պետութիւնն է, վորին վիճակված է մշտական հարձակումների վտանգի յենթարկվելու պայմաններում կիրառել պրոլետարիատի դիկտատուրան: Յեւրոպայում և Ամերիկայում պրոլետարական հեղափոխութեան հապաղումը մեր տնտեսութեան զարգացման համար խոշոր խոչընդոտ է հանդիսանում: Կասկած չկա, վոր համաշխարհային կապիտալը դեռ ելի փորձելու է բնաջնջելու կամ թուլացնելու իրեն համար առելի Խորհուրդների հանրապետութիւնը, չնայելով վոր 1924 թվին և մինչև այդ տարին Ս. Խ. Հ. Միութիւնը ճանաչվել և շատ կապիտալիստական պետութիւնների կողմից (Մեքսիկայի, Իտալիայի, Գերմանիայի և այլն):

Յերրորդ.—Ներքին կատաղի քաղաքացիական կռիւներից բխող դժվարութիւններ. կռիւներ վոր մեր կուսակցութիւնը հարկադրված է յեղել մղել մինչև 1921 թ. ներսույալ: Կռիւլ ներքին հակահեղափոխութեան դեմ ավելի քան ծանր էր, վորովհետեւ ներքին հակահեղափոխութիւնը ապավինում էր ոտարյերկըյա կապիտալի աջակցութեան:

Յերրորդ.—Ծայրատիճանի քայքայումն ու հյուժումը, վորպես հետեանք 1914-1918 թ. թ. քառամյա իմպերիալիստական պատերազմի և ավելի քան յեռամյա քաղաքացիական կռիւներին:

Չորրորդ.—Խորհրդային յերկրի տնտեսական և կուլտուրական հետամնացութիւնը, մանավանդ գյուղում, տիրապետող մանր տնտեսութիւնը, արտադրողականութեան մանուկանդ գյուղական տնտեսութեան մեջ չափազանց ցածր մակարդակը, ազգաբնակչութեան տգիտութիւնը և այլն:

Մեր կուսակցութիւնը Խորհրդային իշխանութեան վեցամյա գոյութեան ընթացքում ջախջախեց ու հաղթահարեց մի շարք հակայական դժվարութիւններ ու խոչըն-

դոսներ (աբաբքին և ներքին կռիւները, 1920 թ. խոշոր չափերով մեր տնտեսութեան անկումը և 1921 թ. սովը, կապիտալիստական պետութիւնների բոյկոտը և այլն): Սակայն հակայական դժվարութիւններ կան առկա վրին մեր կուսակցութեան առաջ, վորոնք դանդաղեցնում են նրա շինարարութեան ընթացքը և վորոնց հաղթահարելու համար պահանջվում է մեր կուսակցութեան և բոլոր Խորհրդային հանրապետութիւնների բանվոր դասակարգի ու գյուղացիութեան ուժերի լարումը:

13. ԻՆՁ Ե ՇԱՀԵԼ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ 6 ՏԱՐՎԱ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅԻՈՒՄ

Հսկանքներյան հեղափոխութիւնից հետո, մեր կուսակցութիւնը, չնայելով այն մեծագոյն դժվարութիւններին ու խոչընդոտներին, վորոնք կանգնած են յեղել նրա առաջ, կատարել է քաղաքական և տնտեսական խոշոր նվաճումներ և լուծել մի շարք ըստ ամենայնի կարեւոր խնդիրներ:

Քաղաքանախնութեան ապաւընգում՝ նետեվանքները սըրանք են.— Աշխարհի ¹/₆ մասի տերրիտորիայում անհող-դող կերպով հաստատված է Խորհրդային իշխանութիւնը, յետ ևն մղված ներքին հակահեղափոխութեան ու արտաքին կապիտալի կողմից նրա գոյութեանը սպառնացող կատաղի հարձակումները:

Սրան գերազանցորեն նպաստել է մեր կուսակցութեան ազգային քաղաքականութիւնը, վոր ազգերի բանտից, վորպիսին էր ցարական Ռուսաստանը, ստեղծեց Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնների հոժարակամ ու յեղբայրական Միութիւնը:

Միաժամանակ մեր կուսակցութեանը հաջողվեց կատարելապես ու վերջնականապես քայքայել բանվոր դասակարգին թշնամի բոլոր կուսակցութիւններն (մինչև իկ-

ներին, սոց.-հեղափոխականներին, անիշխանականներին և այն) ու կազմակերպությունները (ի թիվս վորսնց նաև յեկեղեցին, վորը տարիներ շարունակ բացարձակ կռիվ էր մղում Սորհրդային իշխանութան դեմ):

Տնտեսական ասպարեզում:—մեր կուսակցությունը, մանավանդ նոր տնտեսական քաղաքականություն շնորհիվ, խորհրդային յերկիրը ծայրահեղ հոլծիվածության և սղքատության վիճակից դուրս բերեց, բարելավեց բանվորների ու զյուղացիական մասսաների տնտեսական դրությունը և ժողովրդական ու պետական տնտեսական կյանքի ամրապնդման ասպարեզում վորոշ հեականքների հասավ: Վերջապես համաշխարհային պրոլետարական հեղափոխություն զարգացման գործում մեր կուսակցությունը իր պայքարով և շինարարություն ասպարեզում իր ունեցած հաջողություններով համաշխարհային հեղափոխության աճման վրա, ինչպես արեմուտքում, նույնպես և արևելքում, ունեցել է, և շարունակում է ունենալ հզոր ազդեցություն: Մեր կուսակցության ղեկավարությունը ու նրա ամենահզոր մասնակցությունը աճում և ամրանում է կոմունիստական Խաղերնացիոնալը: Մյուս կողմից մոտավոր և հեռավոր արևելքի յերկիրներն ու ժողովուրդները և համաշխարհային կապիտալիզմի կողմից ստրկացրված այլ զաղություն յերկրներ, քաջալերված խորհրդային հանրապետության որինակով և արտաքին ու ազգային քաղաքականության ասպարեզում նրա վարած քաղաքականությամբ, պայքարում են իմպերիալիզմի լծից ազատագրվելու համար:

14. ՎՈՐՆ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կուսակցության արտաքին քաղաքականության խնդիրներն յեղել են և՛ յին. — 1) պայքար խորհրդային հանրապետության անկախության, մյուս պետությունների

կողմից նրան և նրա որենքները ճանաչելու և խորհրդային պետության միջազգային ազդեցությունը ուժեղացրնելու համար, 2) վոչնչացնել ցարական հին պատերազմական պարտքերը և այն ֆևսաները, վոր հեղափոխությունը պատճառել է ոտարյերկրյա կապիտալիստներին և նախկին գործարանատերերին, 3) պայքար խաղաղության համար, ընդդեմ նոր իմպերիալիստական պատերազմների, վոր պատրաստում են կապիտալիստական պետությունները, 4) առևտրական և այլ հարաբերություններ հաստատել կապիտալիստական պետությունների հետ, 5) մոտավոր և հեռավոր արևելքի հարստահարված և կապիտալիստների դեմ պայքարող յերկրների ու ժողովուրդների հետ բարեկամական հարաբերություններ զարգացնել:

1918-1920 թ. թ. Կարմիր բանակի հաղթանակները արտաքին ճակատներում, խորհրդային Հանրապետություններին հայտարարված կապիտալիստական բոյկոտի (բլոկադաներն ու չճանաչելները) անհաջողությունը, խորհրդային հանրապետությունների ներքուստ ամրապնդվելը և տնտեսական ճակատում ունեցած նշանակալից հաջողությունները զգալիորեն անդրադարձան մեր միջազգային դրության բարելավման վրա, մանավանդ 1923 և 1924 թ. թ.:

Մեր կուսակցությունը վերջապես ձեռք բերեց մի շարք խոշոր կապիտալիստական յերկրների կողմից Ս. Խ, Հ. Միության ճանաչման փաստը և զգալիորեն ուժեղացրեց առևտրական և այլ հարաբերությունները նրանց հետ:

15. ՎՈՐՆ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային խնդրում Հոկտեմբերյան հեղափոխությունը մեր կուսակցությանը հնարավորություն տվեց խորհրդա-

յին հանրապետութեան սահմաններում լուծել հետևյալ հարցերը. 1) — վոչնչացնել վոչ ուս ազգութիւններին ճշնշող դարավոր լուծը, 2) վերացնել ազգային բոլոր սահմանափակումներն ու արտոնութիւնները և կիրառել ազգային կատարյալ իրավահավասարութիւն, 3) իրականացնել բոլոր ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքները մինչև կատարյալ անջատումը և ինքնուրույն պետութիւն կազմելը (թողնելով նրանց վորոշելու իրենց պետական վիճակն ու կազմութեան հարցը), 4) ապահովել մանր ժողովուրդների և ազգային խմբակցութիւնների ազատ զարգացումը, 5) խորհրդային հանրապետութեան տերիտորիայի վրա ապրող բոլոր ժողովուրդների անխախտ Միութեան և փոխադարձ հավատի վրա հիմնված, բնդհանուր միաբան աշխատանքի համար պայմաններ ստեղծել:

Սակայն ազգային հարցի վերջնական լուծման համար տակաւին պահանջվում է վոչնչացնել վերկիսուսների նախկին արտոնյալ վիճակի բոլոր մնացորդները, ոգնել մանր և հետամնաց ազգութիւններին ինչպես տնտեսական, նույնպես և կուլտուրական բնագավառում ըստ հնարավորին արագ վերականգնելու և ազատ զարգանալու համար: Միանգամայն անհրաժեշտ է հրաժարվել դեպի վոչ ուս ազգութիւններն ունեցած կոպիտ, արհամարհական և իշխանական վերաբերմունքից, ազգային հին թըշնամութիւններից ու ատելութիւններից և վճռականորեն պայքարել ազգերի իրավահավասարութեան և հետամնաց ժողովուրդների տնտեսական և կուլտուրական կյանքի մակարդակի բոլորանվեր բարձրացման համար:

Յերակետ ունենալով այս, կուսակցութիւնը Ս. Խ. Հ. Միութեան մեջ ազգային խնդրի նկատմամբ զործնականում կիրարկում է հետևյալ գլխավոր սկզբունքները. —

1) Պետական կառավարչութեան ատպարեզում: — ազգային հանրապետութիւնների ու շըջոնների պետական բոլոր որդաններում և հիմնարկութիւններում գերակշռու-

թիւն տալ տեղացիներին, ավյալ ժողովուրդի լեզուն, կենցաղը, բարքերն ու սովորութիւնները գիտցող մարդկանց, ինչպես նաև տեղական ազգաբնակչութեան և ազգային փորձամասնութիւնների կարիքներին ծառայող բոլոր հիմնարկութիւններում մտցնել մայրենի լեզվի գործածութիւնը:

2) Տնտեսական յեվ ֆինանսական ատպարեզում: — տնտեսապես համեմատաբար թույլ ազգութիւններին ու կարիքավոր ժողովուրդներին ցույց տալ տեական ու ամեն տեսակի նյութական ոգնութիւն, ապահովել հողով, նպաստել գյուղատնտեսութեան և արդիւնաբերութեան բարձրացման, ընձեռել ֆինանսական և բյուջետային լայն իրավունք և այլն:

3) Կրթա-լուսավորութեան ատպարեզում: — զարգացնել յուրաքանչյուր ժողովուրդի ազգային կուլտուրան իր իսկ տեղական դպրոցների, զբաղանութեան ու գեղարվեստի միջոցով և այլն:

16. ԻՆՉ ՄԱՍԵՐԻՑ Ե ԿԱԶՄՎԱԾ Ս. Խ. Հ. ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Խ. Հ. Միութիւնը հանդիսանում է միասնական դաշնակցային պետութիւն, վորի մեջ մտել են հետևյալ չորս խորհրդային հանրապետութիւնները. — 1) Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. — Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ խորհրդային Հանրապետութիւնը, 2) Ու. Ս. Խ. Հ. — Ուկրայնայի Սոցիալիստական խորհրդային Հանրապետութիւնը, 3) Բ. Ս. Խ. Հ. — Բելուուսիայի Սոցիալիստական խորհրդային Հանրապետութիւնը և 4) Ա. Ս. Ֆ. Խ. Հ. — Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ խորհրդային Հանրապետութիւնը:

Այս բոլոր չորս հանրապետութիւնները Ս. Խ. Հ. Միութեան մեջ միացել են պայմանագրերի հիմունքներով, հավասար իրավունքներով, հոժարակամ և այդ հանրապե-

տություններէն յուրաքանչյուրն ամեն վարկյան իրավունք ունի միությունից դուրս գալու:

Այս չորս հանրապետություններէն յերկուսը հասարակ են, յերկուսը՝ ֆեդերատիվ: Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. և Ա. Ս. Ֆ. Խ. Հ. իրենք իրենց հերթին կազմված են մի քանի ազգային հանրապետություններէն ու շրջաններէն, յուրաքանչյուրն իր առանձին ժողովրդով: Այսպէս որինակ, Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. կազմի մեջ մտնում են տասներմեկ ավտոնոմ Սոցիալիստական Խորհրդային հանրապետություններ (Թաթարական, Կիրգիզների, Բաշկիրների, Թուրքեստանի և այլն) և տասը ավտոնոմ շրջաններ (Վոտյակների, Կալմիկների, Չուվաշների և այլն): Նույնն է և Ա. Ս. Ֆ. Խ. Հ., վորի մեջ մտնում են Կովկասի երեք գլխավոր հանրապետությունները, — Ադրբեջանը (Բազու քաղաքով), Հայաստանն ու Վրաստանը: Ամբողջ Ս. Խ. Հ. Միությունը, ինչպէս նաև Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. և Ա. Ս. Ֆ. Խ. Հ. հանդիսանում են ֆեդերատիվ հանրապետություններ կամ ֆեդերացիաներ, վորովհետեւ այդ հանդիսանում է վսշ թե մի հասարակ պետություն այլ մի քանի պետությունների միություն*):

17. ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՎԵՅ Ա. Խ. Հ. ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Խ. Հ. Միությունը կազմվեց 1922 թ. դեկտեմբերի 30-ին: Ռ. Ս. Ֆ. Խ. Հ., Ու. Ս. Խ. Հ., Բ. Ս. Խ. Հ. և Ա. Ս. Ֆ. Խ. Հ. մի գաղնակցային պետության մեջ միանալու պատճառները յերեք տեսակի են. — 1) ներքին, տնտեսական, 2) արտաքին, միջազգային և 3) միացնող

*) Ավտոնոմ Խորհրդային հանրապետություններէն ու շրջաններէն յուրաքանչյուրն ունի իր ազգային ազատ զարգացումն ապահովող ուրույն սահմանադրությունը:

հանրապետությունների Խորհրդային իշխանության իր իսկ ելությունից բղխող:

Բոլոր սոցիալիստական Խորհրդային հանրապետությունները յոթը տարվա ներքին և արտաքին կռիւներէն հետո, տնտեսական շինարարության շահերի տեսակետից, վճռեցին իրենց տնտեսական և ֆինանսական գլխավոր միջոցները լավագույն ձևով ոգտագործելու համար — միացնել:

Միջազգային տեսակետից Ս. Խ. Հ. Միությունը անհրաժեշտ է, վորովհետեւ համաշխարհային բուրժուազիային զինվորական, արտաքին քաղաքականության և արտաքին առևտրի բնագավառներում հակադրելու լավագույն միջոցը հանդիսանում է բոլոր Խորհրդային հանրապետությունների միասնական ճակատ կազմելը: Այդ միասնական ճակատ կազմելը մեզ համար անհրաժեշտ է, մեզ շրջապատող թշնամի կապիտալիստական պետությունների դեմ պայքարելու համար:

Վերջապէս բոլոր Խորհրդային հանրապետություններում տիրապետող Խորհրդային իշխանությունը կապիտալի դեմ մղած իր պայքարում հենվում է բանվոր դասակարգի և գյուղացիության միության, աշխատանքի ու համերաշխության վրա, իսկ այդ համերաշխությունը պահանջում է աշխատավորության ամենամեծ միաբանությունն ու միացումը:

Միության շնորհիվ աճում է Խորհրդային հանրապետությունների ուժը և ամուր պատենշ ստեղծում համաշխարհային կապիտալի դեմ:

Նոր ստեղծվող յուրաքանչյուր սոցիալիստական Խորհրդային հանրապետություն, Ս. Խ. Հ. Միության մեջ ազատ մուտք կունենա:

18. ՎՈՐՈՆՔ ԵՆ Ա. Խ. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԿԱԶՄԻ ՍԵՋ ՄՏՆՈՂ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ

Խորհրդային հանրապետություններում իշխանության

դերագույն, այսինքն ամենաբարձր որդանները հանդիսանում են տարեկան մեկ անգամ հրավիրվող խորհուրդների համագումարները, իսկ համագումարների միջանկյալ շրջաններում՝ Կենտրոնական Գործադիր կոմիտեները։ Ս. Խ. Հ. Մ. խորհուրդների համագումարները կազմվում են աշխպես, ինչպես համառոտական խորհուրդների համագումարները (ըստ Ռ. Ս. Խ. Ֆ. Հ.) այսինքն՝ քաղաքների, քաղաքային խորհուրդների ներկայացուցիչներին, — 250.000 ընտրողից մեկ պատգամավոր և նահանգական համագումարների ներկայացուցիչներին — 125.000 ընտրողից մեկ պատգամավոր։

Խորհուրդներին և Կենտրոնական Գործադիր կոմիտեներին հետո իշխանություն բարձրագույն որդաններ հանդիսանում են՝ կենտրոնում — Գործադիր կոմիտեների Նախագահություններն ու Ժողովրդական կոմիտեների Խորհուրդները (Ժողովրդականները), իսկ տեղերում — շրջաններում, նահանգներում և գավառներում՝ շրջանային, նահանգական և գավառային խորհուրդների համագումարները և նրանց կողմից ընտրված գործադիր կոմիտեները։

19. ԻՆՁՊԻՍԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱՎ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎՐԱ

Ազգային քաղաքականությունը խորհրդային իշխանության պետական կառուցվածքի վրա ունեցել և և շարունակում է ունենալ խոշոր ազդեցություն։ Անմիջապես, հսկանքների հեղափոխությունից հետո, 1918 թ. հունվարին համառոտական խորհուրդների III համագումարում վարչության, վոր Խորհրդային հանրապետությունը կազմվում է ազատ ազգությունների ազատ գաղինքի հիմունքներով, վորպես ազգային խորհրդային հանրապետությունների ֆեդերացիա (գաղնակցություն)։ Բավականաբար ֆեդե-

րացիայի այս հիմունքների սահմանում, համառոտական խորհուրդների III համագումարը թողնում է «յուրաքանչյուր ազգի բանվորներին ու գյուղացիներին իրենց սեփական լիազոր խորհուրդների համագումարում վորոշել, — արդյոք ցանկանում են նրանք մասնակցել ֆեդերացիայի կառավարության և ֆեդերացիայի այլ խորհրդային հիմնարկություններում և ինչ պայմաններով»։

Չնայելով 1918—20 թ.թ. արտաքին ու ներքին կռիվներին, ապստամբություններին, սովի և աշխի հետևանքով ստեղծված ծայր ստեղծան ծանր պայմաններին, մեր կառավարությունը, ինչպես արևելքում նույնպես և արևմուտքում ամուր ու վճռական կերպով տանում էր իր հեղափոխական ազգային քաղաքականությունը, վորի հետևանքը յեղավ այն, վոր նույնիսկ ցարական կալվածատիրական մուսաւաանից կազմվեցին և Խորհրդային իշխանություն կողմից ճանաչվեցին մի շարք, մասամբ խորհրդային, մասամբ բուրժուական, (Ֆինլանդիա, Լիտուան, Լիտվա, Լատվիա, Եստոնիա) ազգային պետություններ։ Ազգային հանրապետությունների ստեղծվելուն զուգընթաց խորհրդային ֆեդերացիայի ներսում տեղի ունեւր նաև ազգային շրջանների կազմավորումը, վորոնցից յուրաքանչյուրն ունի իր ազգային ազատ գաղաքումը ապահովող հատուկ կառուցվածք։

1922 թ. գեղանքներին, առանձին գոյություն ունեցող բոլոր Խորհրդային հանրապետությունները միացան և կազմեցին Ս. Խ. Հ. Միությունը. — Գաղնակցային պետություն։ Միության մեջ մանող յուրաքանչյուր հանրապետության իրավունք և վերապահված Միությունից դուրս գալու, յերաշխաւորված և նրա տերիտորիայի անձեռնմխելիությունը, ինչպես նաև ազգային լեզվի, կուլտուրայի, տնտեսականաւուկ կենցաղի և այլն բնագավառներում ազատ զարգացման իրավունք։

Ս. Ն. Հ. Միությունը կազմող առանձին հանրապետությունների և շրջանների իրավունքները լավագույն կերպով ապահովելու և նրանց շահերը պաշտպանելու համար, Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կազմի մեջ ստեղծված և Ազգերի խորհուրդը:

Ազգերի խորհրդի մեջ հավասար իրավունքներով ներկայացուցիչներ մտնում են բոլոր ազգային հանրապետություններից (յուրաքանչյուրից 5-ական ներկայացուցիչ) և ազգային ավստոնոմ շրջաններից (յուրաքանչյուրից 1-ական ներկայացուցիչ): Ազգերի խորհուրդն իր իրավունքներով համարժեք է իշխանության մյուս բարձրագույն որգանին—Միությունական խորհրդին, վորը ընտրվում է համամիութենական համագումարի խորհուրդների կողմից և վերջինիս հետ միասին կազմում Ս. Ն. Հ. Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն:

20. ԻՆՋՊԵՍ ԵՆ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԵԼՈՒՆ:

Խորհրդային իշխանության որգանների ստեղծմանը բանվորները ու գյուղացիները մասնակցում են, ոգտվելով խորհրդային ընտրողական իրավունքից, վորը յուրաքանչյուր բանվորի ու գյուղացու լիակատար իրավունք և իրական հնարավորություն է տալիս պետական իշխանության հիմնական որգաններում—խորհուրդներին և խորհուրդների համագումարներին—ընտրելու իրենց պատգամավորները (ակտիվ ընտրողական իրավունք) և իրեն ել՝ ընտրվելու (պասսիվ ընտրողական իրավունք): Խորհրդային իրավունքի առանձնահատկությունն այն է, վոր նա պատկանում է միայն աշխատավորությանը և զրանից զրկված են բոլոր նրանք, վորոնք չեն սպրում իրենց սեփական աշխատանքի արդյունքներով:

Խորհրդային ընտրողական իրավունքը սերտ կերպով կապված է արտագրության և աշխատավորության ամենալայն խավերի հետ, վորովհետե մեզ մոտ խորհուրդների ընտրությունները կատարվում են ըստ ձևոնարկությունների, ըստ ֆաբրիկաների ու գործարանների:

Սյապիսով, ըստ մեր ընտրողական իրավունքի կիրարկման, շահագործողները և բոլոր ունևոր տարրերը, խորհրդային իշխանության որգաններից և վոչ մեկում տեղ չեն կարող ունենալ և վերջինս ամբողջապես ու բացառապես պատկանում է աշխատավոր մասսաներին և նրանց լիազոր որգաններին—խորհուրդներին և խորհուրդների համագումարներին:

21. ԻՆՋՊԵՍԻ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Ե ՎԱՐՈՒՄ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՅԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պետական խոշոր արդյունաբերությունը և գյուղացիական տնտեսությունը (վոր հաց և արտադրում ու այն ազատ սպառում) շաղկապելու քաղաքականություն՝ այսինքն գյուղի և քաղաքի տնտեսական շաղկապի քաղաքականություն:

Բանվոր դասակարգի և գյուղացիության տնտեսական ձուլման քաղաքականությանը մեր կուսակցությունը ձևոնամուխ եր յեղել 1921 թ. գարնանից, քաղաքացիական կռիվներից հետո և յերկրի ծայր աստիճան քայքայման ու տնտեսական կյանքի անկման պատճառով: Խորհրդային հանրապետությունների յերկու հիմնական դասակարգերի—բանվորների և գյուղացիների—տնտեսական զուգման քաղաքականությունը կոչվում է նոր տնտեսական քաղաքականություն:

22. ՎՈՐՆ Ե ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՅՈՒ- ԹՅՈՒՆԸ

Նոր տնտեսական քաղաքականության ելույթունը՝ սրբութարիւթի և գյուղացիութեան՝ նոր տնտեսական հիմքերի վրա հենված միությունն է (մի կողմից առևտրի, մյուս կողմից արդյունաբերութեան գոգման միջոցով): Բացի այդ, այդ միութեանը մասնակցելու թույլ է տված նաև մասնավոր կապիտալին փոքր աշխատանքներով: Սորհրդ-դային իշխանութեանն այդ կապիտալը գործադրում է հոգուտ մեր արդյունաբերութեան աճման և զարգացման:

Վ. Ի. Լենինը ուսուցանում էր, փորձեր հեղափոխու-թյան (և ապագա բոլոր սոցիալիստական հեղափոխու-թյունների) ամենահիմնական հարցը դա բանվոր դասակար-գի ղեկի գյուղացիութեանն ունեցած վերաբերմունքն է, դա բանվոր դասակարգի և գյուղացիութեան միութեանն է:

Հեղափոխութեան հաջողութեանը կախված է այն բա-նից, թե բանվորներն արդյոք կկարողանան գործը այն-պես տանել, փոր ղեկի իրենց գրավեն գյուղացիութեան աշխատավոր մասսաները, կկարողանան արդյոք նրանք գործով ցույց տալ, փոր իրենց հետ միանալով և միայն, փոր գյուղացիութեանը կփրկվի կալվածատերերի ու կա-պիտալիստների դարաշփոթից և հնարավոր կգարձնի իր կյանքի բարեկամները:

Մինչև 1921 թ. բանվորների և գյուղացիների միու-թյունը ապահովված էր նրանով, փոր յուրաքանչյուր գյուղացի զիտեր, փոր իր դեմ կանգնած է դարավոր թշնամին—կալվածատերը: Ու դրա համար ել քաղաքական ու զինվորական դաշինքը ամուր էր ու անհաղթելի:

Յեվ փորպեսզի այդ դաշինք հարատև լինի նաև կալ-վածատերերը հաղթելուց հետո, անհրաժեշտ էր ստեղ-ծել այն տնտեսական կապը, փորը հանդիսանում էր միակ հնարավորը—դա տնտեսության և առևտրի միջոցով ստեղծված կապն է:

Գյուղատնտեսութեան զարգացումը և գյուղացիու-թյան բարեկեցիկ վիճակն առանց խոշոր արդյունաբե-րութեան զարգացման—անհնարին են: խոշոր արդյունա-բերութեանը իր հերթին շահադրդոված է գյուղական տնտեսութեամբ, փորպես սպառման շուկայի և փորպես հում նյութերի աղբյուրի: Այսպիսով գյուղի և քաղաքի միութեան տնտեսական ընդհանուր հիմունքները մեզ մոտ գոյութեան ունեցին: Սակայն չկար այն, ինչ փոր հարկա-վոր էր մանր գյուղացիութեան տնտեսութեան շահերի համար: Դրա համար հարկավոր էր գյուղացիութեանը ա-զատ իրավունք տալ իր ունեցած հացի նկատմամբ, դրա համար անհրաժեշտ էր ազատ առևտուրը: Առանց դրան, մեր տնտեսական կյանքի քայքայված աշխատանքներում գյուղացիութեան հետ հարկ յեղած կապը պահպանելն ան-հնար կլիներ: Նոր տնտեսական քաղաքականութեանը հանդիսանում է մի զիջում մանր արդյունաբերողին, հա-նուն ինչպես սրբութարիւթի, նույնպես գյուղացիու-թյան և արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան շահերի:

Այս քաղաքականութեանը անհրաժեշտ է կապիտա-լիզմից կոմունիզմին անցնելու անցողական շրջանում վնչ միայն մեզ համար, այլև, իշխանութեանը բանվոր դասա-կարգի ձեռքն անցնելուց հետո, կապիտալիստական յերկը-ններից շատերի համար:

23. ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ Ե ՏԱԼԻՍ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒ- ՆԸ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Նոր տնտեսական քաղաքականության ըստաքական նշա-նակութեանը կայանում է բազմամիլիոն գյուղացիու-թյան և բանվոր դասակարգի միութեան ամրապնդման, գյուղացիութեան աշակցութեանը մեր կուսակցութեան համար ապահովելու և խորհրդային իշխանութեան բերդն ու ժեղացնելու մեջ:

Բանվոր դասակարգի համար նոր տնտեսական քաղաքականությունն այն նշանակություն ունի, վոր նա հնարավորություն է տալիս գործարաններն ու ֆաբրիկաները հավաքելու պրոլետարական փոշիացած կադրերին, բարելավելու նրանց տնտեսական դրությունը և ամրապնդելու պրոլետարիատի զիկտատությունը:

Նոր տնտեսական քաղաքականության տնտեսական նշանակությունն այն է, վոր նա արդեն զարկ է տվել և հետագայում ել ապահովելու յե յերկրի բարեկեցության բարձրացումը և նրա արտադրական ուժերի զարգացումը: Պրոլետարիատի զիկտատության պատվանդանը հանդիսանում է խոշոր արդյունաբերությունը, վորը մեզ մոտ պատկանում է խորհրդային պետությանը: Այդ արդյունաբերությունը զարգանալ կարող է միմիայն ներքին իրական մեծ պահանջի գեպքում, վորպիսին մեզ մոտ հանդիսանում է բազմամիլիոն գյուղացիության պահանջ: Նոր տնտեսական քաղաքականությունը, վոր նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը, զրանով միաժամանակ նպաստում է արդյունաբերական ապրանքների պահանջի մեծացմանն ու ապահովմանը, ոգնում է մեր պետական խոշոր արդյունաբերության և դրա հետ նաև՝ պրոլետարիատի աճման ու ամրապնդմանը:

Քաղաքական և տնտեսական այդ հաջողությունների մեջ ել, մեր կուսակցությունը տեսնում է նոր տնտեսական քաղաքականության առանձին կարևոր նշանակությունը:

24. ԻՆՉՊԻՍԻ ՎՏԱՆԳԻ ՇԵՏ Ե ԿԱՊՎԱԾ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վտանգը—մասնավոր կապիտալի զարգացումն է (հանձինս մասնավոր խոշոր արդյունաբերողի, առևտրականի), վորին կյանքի յե կոչել նոր տնտեսական քաղաքականու-

թյունը: Վտանգը—նոր բուրժուազիայի աճումն է, գյուղատնտեսությունն անբավարար գնահատումը:

Մենք՝ կոմունիստներս, այդ վտանգը տեսնում ենք (վորի վրա հաճախ մասնաճեղ է Վ. Ի. Լենինը) մի կողմից պետական արդյունաբերության, պետական կապիտալի և մյուս կողմից՝ հանձինս մասնավոր, զլխավորապես առևտրական կապիտալի մրցման մեջ:

Մեր արդյունաբերությունը կարող է զարգանալ միայն գյուղական շուկայի վրա հենվելով: Յեթե յերեվաց, (յերկար ժամանակ), վոր պետական արդյունաբերության ապրանքները գյուղացիության համար թանկ են, քան մասնավոր արդյունաբերողի կամ տնայնագործի ապրանքները, — թեկուզ այն պատճառով, վոր մեզ վրա այն թանկ է նստում կամ վատ ենք առևտուր անում, — ապա փոխանակ պետական արդյունաբերության ու գյուղական տնտեսության և պրոլետարիատի ու գյուղացիության զուգման, տեղի կունենա մասնավոր կապիտալի ու գյուղացիության զուգում:

Տնտեսական ասպարեզում նոր բուրժուազիայի և գյուղացիության այդ կապը անխուսափելիորեն կլերածվի քաղաքական զուգման, բուրժուազիայի կողմից քաղաքական իրավունքների և իշխանության պահանջի, վորպիսին բանվոր դասակարգը թույլ տալ չի կարող:

25. ԻՆՉՊԵՍ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԴԵՄ

Նոր տնտեսական քաղաքականությանն անցնելիս, պետության ձեռքում մնացին հողը և նրա հանքային հարուստությունները (հողը չի կարող առ ու ծախսի առարկա լինել), համարյա ամբողջ խոշոր արդյունաբերությունը, յերկաթուղային ու ջրային արանսպորտը և խոշոր չափերով գյուղատնտեսական, արդյունաբերական և առևտրա-

կան վարկերը (բանկերը): Սրանով մեր կուսակցությունը պրոլետարիատի ձեռքը ամեն կամուրջով համար պայքարելու ամենաուժեղ զենքը, աճող կապիտալի դեմ կռվելու համար: *)

Սակայն տակավին նոր տնտեսական քաղաքականության անցներու հենց սկզբից, Վ. Ի. Լենինը, խորը սթամուլթյամբ մատնանշեց, լուր նեպ-ի վտանգների դեմ պայքարելու համար այլ դեռ բավական չէ, «պրոլետարիական պետությունը, — ասում եր Վ. Ի. — պիտի լինի զգուշ յեռանդոտ, հասկացող «աեր» (ХОЗЯЙСТВО), որինակելի ու բարեխիղճ մեծածախ առևտրական, հակառակ գեպրում այս մանր — գյուղացիական յերկիրը նա չի կարող վտարի կանգնեցնել, հակառակ գեպրում այժմ, ներկա պայմաններում, տակավին կապիտալիստական արևմուտքի հարևանությունը, կամուրջովին անցներու այլ ճանապարհ չկա... Մենք կամուրջատներս պիտ սպորենք առևտուր անել, վորովհետև միայն առևտրի միջոցով կարող ենք միլիոնավոր մանր գյուղացիներին տնտեսապես միացնել, նրանց շահագրգռել, կապել և հենց արտադրության գանաղան ձեի կապերի ու միացումների միջոցով մոտեցնել հեռույալ աստիճաններին: **)

Մեր կուսակցությունը հետևելով Վ. Ի. Լենինի ցուցմունքներին, իր ամեն մի քայլը գնահատելիս, աչքաթող չի անում խորհրդային հանրապետություն համար գյուղատնտեսության ունեցած գերակշիռ նշանակությունը: Կուսակցությունն ամուր կանգնած և այն տեսակետին, լուր նեպ-ի ժամանակ, գյուղացիությունը պետական արդյու-

*) Հողը և նրա հանքային հարստությունները, ֆարրիկաներն ու գործարանները, յերկաթուղային ու ջրային տրանսպորտը և այլն պետականացրած գույքեր են, այսինքն՝ գույքեր, վորոնք մասնավոր խոշոր սեփականատերերից բռնագրաված են և պրոլետարիական պետության սեփականություն դարձրած:

**) 1921 թ. հոկտեմբերի 14-ին:

նաբերական մթերքներով լավագույն կերպով մատակարարելու գործը հանգիստանում և տնտեսական հիմնական խնդիր: Յեղակետ ունենալով այս տեսակետը, մեր կուսակցությունը դիմում և ամեն միջոցի արդյունաբերությունը լավագույն կերպով կազմակերպելու համար: Նա նպատակադրել և արդյունաբերությունից գյուղի համար ստանալ ըստ հնարավորի, մեծ քանակությամբ պետական լավորակ և աժան ապրանքներ: Դրան հասնել — կնշանակի մեկուսացնել նոր տնտեսական քաղաքականության հետ կապված խոշորագույն վտանգները:

26. ՎՈՐՈՆՔ ԵՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ

Քաղաքականությունը, չնայելով բոլոր դժվարություններին, նոր տնտեսական քաղաքականությունն ամրապնդել և բանվորների ու գյուղացիների միությունը, դրա հետ միասին ամրապնդելով նաև Ս. Խ. Հ. Միությունը ներքին ու միջազգային գրությունը:

Գյուղատնտեսությունը ամրապնդում նոր տնտեսական քաղաքականությունը գյուղացիությունը հնարավորություն տալից ընդարձակելու ցորենի ցանքերը, ուժեղացնելու հատուկ մշակությունների (բամբակի, ծխախոտի, լուգարեր բույսերի, ճակնդեղի, կտավատի և այլն) արդյունաբերությունը: Ցանքների տարածությունը (Ս. Խ. Հ. Միության ներկա սահմաններում) ընդարձակվել և մինչև 61,2 միլ. գեոյատինով, այսինքն հասել և նախապատերազմյան տարածություն չ10⁰ -ին, իսկ գյուղատնտեսությունը ընդհանուր արտադրողականությունը բարձրացել և հասել է՝ նախապատերազմականի համեմատությամբ, մինչև 75⁰ -ին: Միաժամանակ նշանակալից չափերով աճել և գյուղատնտեսական արդյունաբերությունների տարածքների մասնաշաղկան գումարը, — այսինքն մթերքների

այն գումարը, վորը գյուղացին տալիս եր շուկային (1922 թ. ապրանքային արժեքը միմիայն ցորենի նկատմամբ հաժվապես եր 150 միլ. ուրբ. իսկ 1923 թ.՝ 500—550 միլ. ուրբ.):

Գյուղատնտեսութեան բարելավումը ինքնին ստեղծեց տնտեսական կյանքի այն հաստատունն պատմականը, առանց վորի արդյունաբերութեան և պրոլետարիատի իրական զարգացումը անկարելի եր:

Շնորհիվ տնտեսական նոր քաղաքականութեան, արդյունաբերութեան ու տրանսպորտի վերականգման գործում նաև՝ կատարվել են նշանակալից նվաճումներ: Արդյունաբերութեանը—մեծ ու փոքր—պատրաստի ապրանքների արտադրութեանը 1913 թ. նկատմամբ բարձրացել ե 40,3%՝ ու (1913 թ. այդ ապրանքների արժեքն եր 3 միլիարդ 721 միլ. ուրբ. վոսկով, իսկ 1923 թ.՝ 1 միլիարդ 294 միլ. ուրբ.): Այստեղ առանձնապես նշանակալից ե այն հանգամանքը, վոր շնորհիվ ածուխի և նավթի արտադրութեան, վառելիքով ապահոված ե մեր արդյունաբերութեանն ու տրանսպորտը: Տրանսպորտը նույնպես խոշոր չափերով բարեկարգվել ե. սույն 1924 թ. յերկաթուղու շահագործումը դառնում ե գրեթե անփնտ:

Շնորհիվ տնտեսական նոր քաղականութեան, գյուղից դեպի գործարանները, ֆաբրիկաներն ու տրանսպորտ են վերադարձել, քաղաքացիական կռիվների ժամանակ ցրվ յեկած վորակյալ բանվորները. զրա հետ միաժամանակ բարելավվում ե նաև բանվոր դասակարգի ընդհանուր դրութեանը:

Խոշոր և զգալի հաջողութեաններ ենք ունեցել նաև արտաքին առևտրի ասպարեզում, ուր արտածումը գերակշռում ե ներմուծման, վորի շնորհիվ զազարել ե դեպի արտասահման գնացող մեր վոսկու հոսանքը և ընդհակառակը՝ այժմ նա գալիս ե դեպի մեզ աճող հոսանքով:

Ելական հաջողութեանների ենք հանգել զրամաշրջա-

նառութեան ասպարեզում. ձեռնամուխ լինելով կայուն (վոչ անարժեքավոր) զրամ ստեղծելուն, դադարեցրել ենք անարժեքացող խորհրդային զրամանիշների բաց թողնումը:

Սրանք են ահա տնտեսական նոր քաղաքականութեան զրական հետևանքները:

27. ՎՈՐՆ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՍՊԱՐԵՋՈՒՄ

Այդ խնդիրը՝ «մկրատի» վերջնական մեկուսացումն ե. այսինքն—արդյունաբերական և գյուղատնտեսական մթերքների գների տարբերութեան և այդ գների միջև յեկած կանոնավոր հարաբերութեան հաստատելու խնդիրը: Այդ հարաբերութեանը, վոր սկսվել եր 1923 թ. ամռանից և առանձնապես սուր կերպով արտահայտվել սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներին,—խոշոր վտանգ ե հանդիսանում արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան մերձեցման նկատմամբ մեր կուսակցութեան դժած ընթացքի համար: *)

«Մկրատի» ելութեանը արդյունաբերական ապրանքների գների բարձր և գյուղատնտեսական մթերքների գների ցածր լինելն եր, վորի հետևանքով, հարյուր միլիոն գյուղացիութեանը հնարավորութեան չեր ունենում, չնայելով իր տնտեսութեան ամրագնդման, ձեռք բերել արդյունաբերական ապրանքներ:

*) Շնորհիվ մեր կուսակցութեան և Խորհրդային իշխանութեան ձեռք առած միջոցների, 1924 թ. ապրիլին արդեն զգալիորեն տեղի ունեցավ մեծաքանակ վաճառքի «մկրատի» սեղմում, արդյունաբերութեան և գյուղատնտեսական մթերքների մեծաքանակ վաճառքի գների փոխարարերութեան մեջ համարյա թե տեղի ունեցավ կանոնավոր մերձեցում: Այժմ կուսակցութեան հերթական հոգան ե լինելու վերջրականապես մեկուսացնել «մկրատը», այսինքն՝ գների տարբերութեանը վերացնել նաև մանր քաղաքների մեջ:

Յեթե արդյունաբերական ապրանքների գները չիջեցվեն և մյուս կողմից չբարձրացվեն գյուղատնտեսական մթերքների գները—ապա գյուղի և քաղաքի,—արդյունաբերություն և գյուղատնտեսություն կապերի խզումը անխուսափելի կլինի: Գյուղացիությունը քաղաքին չի տա նրան նահրաժեշտ պարենավորումն ու հում նյութն, իսկ արդյունաբերությունն իր արտադրությունների համար չի ունենալ սպառման շուկա: Այս պայմաններում մի կողմից անխուսափելիորեն տեղի կունենա արդյունաբերության արտադրության կրճատում, բանվոր դասակարգի դրություն բարելավման գործում ձեռք բերած հաջողությունների նվազում, իսկ մյուս կողմից՝ տեղի կունենա գյուղացիության նպաստող նստուրալ տնտեսության ձևերին անցնելը և ներքին ու արտաքին մասնավոր կապիտալի հետ մերձենալու փորձերին ձեռնարկելը: *)

28. ՎՈՐՆ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Գյուղական (գյուղացիական) տնտեսությունը հանդիսանում է արդյունաբերության զարգացման, հետևապես նաև բանվոր դասակարգի աճման նեցուկը, այդ պատճառով գյուղատնտեսությանն ըստ հնարավորին մեծ աջակցություն ցույց տալ պահանջում է ինչպես ընդհանրապես խորհրդային իշխանություն, նույնպես և իրեն՝ արդյունաբերության արագ զարգացման շահ:

Յեկակետ ունենալով այս տեսակետը, մեր կուսակցությունը կիրարկում է հետևյալ գործնական միջոցները—1) Գյուղատնտեսական մթերքների գները բարձրա-

*) Նատուրալ տնտեսությունն այն տնտեսությունն է, փորի ժամանակ գյուղացիությունն իր սեփական տնտեսության մեջ պատրաստելով իրեն համար անհրաժեշտ ապրանքները, խուսափում է արդյունաբերական ապրանքներ ձեռք բերելուց:

ցնելու և նրանց ավելի կայուն դարձնելու նպատակով, ամենայնուպես կերպով ձեռնամուխ է լինում ամեն միջոցի՝ ուժեղացնելու այդ մթերքների արտաձուլմը արտասահման. 2) Գյուղատնտեսության մակարդակը տեխնիքապես բարձրացնելու գործում գյուղացիությունը ոգնություն է համնում, արտոնյալ պայմաններով գործիքներ ու մեքենաներ մատակարարելով, ինչպես նաև խրախուսելով ավելի թանգարժեք կուլտուրաների մշակույթը (բամբակի, կտավատի, ծխախոտի, ճակնդեղի, վոլխարաբուծության և այլն): 3) Միջոցներ է ընձեռում վերանորոգելու գյուղատնտեսական ինվենտարը և գյուղատնտեսական բանկի միջոցով աժան գյուղատնտեսական վարկի կազմակերպմամբ ընդլայնում է գյուղական տրնտեսություն շրջանառություն միջոցները: 4) Միջոցներ է կիրառում, մասնավորապես չքավոր խավերի համար, կրճատելու հարկերը, 5) կազմակերպում է գյուղատնտեսական կոոպերացիաներ և աջակցում նրանց:

Տնտեսական նոր քաղաքականությունը և ազատ ապրանքափոխանակությունը գյուղում ուժեղացնում է հարուստ կուլակային տարրը, դրա համար ել մեր կուսակցություն քաղաքականությունը հատուկ ուշադրություն է դարձնում չքավոր (անլծկան, սակավահող) գյուղացիության վրա (հարկերի կատարյալ վերացումով, յերկարատև արտոնյալ վարկերով և այլն), փորպեսզի թույլ չտա նրանց այդ կուլակային տարրի ճորտը դառնալ:

29. ՎՈՐՆ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Արդյունաբերության ասպարեզում մեր կուսակցություն քաղաքականության հիմնաքարը, փորպես պրոլետարիատի դիկտատուրայի և կոմունիզմի շինարարության նեցուկի, հանդիսանում է պետական խոշոր արդյունաբե-

րության զարգացումը: Արդյունաբերության զարգացումը ամենից առաջ կախված է գյուղական շուկայի նվաճումից: Մասնավոր կապիտալի դեմ հաջող կերպով մրցելու համար պետական արդյունաբերությունը, գյուղացիներին և բանվորներին ապրանքներ մատակարարելու գործում, պիտի մեծացնի մասնաշաղկապի գործածության ապրանքների արտադրությունը և անպայման դնելը պիտի հարմարեցվեն գյուղական և քաղաքային (բանվորական) շուկաների գնողական ընդունակություններին:

Այսպիսով, գների իջեցման քաղաքականությունը կիրառելու նպատակով, մեր կուսակցությունը անհրաժեշտ է համարում. — 1) արդյունաբերության հետագա բարելավումն ու ընդլայնումը, 2) վերադիր ծախսերի ավելի քան կրճատումը, 3) արդյունաբերության հետագա կենտրոնացումը, այսինքն՝ արտադրության կազմակերպումը ըստ հնարավորին կենտրոնացնել ավելի քիչ թվով գործարաններում և ֆաբրիկաներում և այդպիսով ուժեղացնել նրանց և 4) բարեկարգել ու աժանացնել արդյունաբերության առևտրական ապարարտը:

Սակայն մեր կուսակցությունն անհրաժեշտ է համարում գործարանները չփակել այնպիսի դեպքերում, յերբ այդ փակումը կը նշանակեր հարված բանվոր պատակարգի քաղաքական հզորությանը, յերբ նա պատճառ կը դառնա պրոլետարիատի անհամեմատ կազմակերպված և ուժեղ կազմերի ցրման, որինսով Պուտիլովի, Բըյանսկի և այլ նման գործարանները:

Ներկայումս կուսակցությունը անհրաժեշտ է համարում մինչև խոշոր արդյունաբերության կատարելապես ամրանալը, աշակցել մանր և տնայնագործական արդյունաբերությանը (վերջինս արհեստավորական կոտորուցիլաներում կեղծակերպելով), փորը, բարձրացնելով գյուղական տնտեսության արտադրողական ուժերը, կարող է նրան ոգտակար լինել:

Կուսակցությունն առաջվա պես դանում է, քանի վոր շատ յերկրներում տակավին իշխանությունը զրանվում է կապիտալիստների ձեռքում, — ապա մեր յերկրի արտադրական ուժերի զարգացման տեսակետից, անհրաժեշտ է զանազան ձևերով դեպի մեզ զրավել մասնավոր կապիտալը, — տալով մեր կամ ոտարյերկյա մասնավոր կապիտալիստներին կոնցեսիայով*) և կապալով պետական այն ձեռնարկությունները, վորոնք նա ինքը վարել չի կարող:

30. ՎՈՐՆ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՍՊԱՐԵՋՈՒՄ

Ֆինանսների ասպարեզում մեր կուսակցության առաջիկա գլխավոր խնդիրը հանդիսանում է կայուն դրամ սահմանելը: Խորհրդային ընկերող դրամանիշը կայուն ուղբով փոխարինել, — կը նշանակե բարելավել գյուղական տնտեսության գրությունը, կը նշանակե բարելավել բանվոր դասակարգի և ազգաբնակչության աշխատավոր խավերի վիճակն ընդհանրապես, կը նշանակե առողջացրնել խորհրդային հանրապետությունների վողջ տնտեսության կյանքը:

Դրամական բարեփոխությունը ամբողջովին հնարավոր է միայն այն դեպքում, յերբ պետական ծախքերը չեն զերակշռի պետական յեկամուտներին (յերբ պետական բյուջեն դեֆիցիտ չի ունենա): Այդ տեսակետից մենք նշանակալից հաջողությունների հասել ենք արդեն:

*) «Կոնցեսիա» բառը նշանակում է զիջում: Խորհրդային իշխանությունը ինքը միայն բացառապես իրավունք ունենալով տնտրիսելու յերկրի հարստությունները, նրանց առանձին մասնիկները, յերկրի համար վորոշ, ձեռնտու պայմաններով, ժամանակավորապես «զիջում է» առանձին կապիտալիստներին կամ նրանց խմբակցություններին շահագործելու համար:

Պետական ծախքերը կրճատված են, պետական գույքերից (անտառներից, քաղաքային հողերից, հանքերից և այլն) և ձեռնարկություններից (տրանսպորտից, արդյունաբերությունից, կոնցեսիաներից և այլն) ստացվող յեկամուսներն աճել են: Աճել են նաև վարկային (հացի փոխառության, վոսկու փոխառության և այլն) գործարքների յեկամուսները:

Սակայն ձեռք բերած այս հաջողությունները մեր կուսակցությունը տակավին գտնում է անբավարար: Հետագայում պիտի լարել բոլոր ուժերը, վորպեսզի բանվորների և գյուղացիների վրա հարկերը չավելացնելով, մեծացվեն պետական գույքերից և ձեռնարկություններից ստացվող յեկամուսները:

Պետական յեկամուսների անկման հարցը և բնկնող խորհրդային դրամանիշներից կայուն դրամական միավորի անցնելու հնարավորությունը՝ թեթեւանում է նրանով, վոր անհ մի տարի է, վոր տնտեսական շրջանառության մեջ է գտնվում, հանձինս չերվոնցի, կայուն դրամը: Արդեն չերվոնցիով է կատարվում ամբողջ դրամական շրջանառության ⁴/₅-ից ավելին կամ 90⁰/₁₀-ը: Այսպիսի պայմաններում կուսակցությունը դրամական բարեփոխության հաջողությանը չի կասկածում, վորը ապահովված է ամբողջ բանվորության ու գյուղացիության լիակատար աշակցությամբ:

Մեր ֆինանսների (ինչպես նաև մեր տնտեսության) ամբապնդման համար մեր կուսակցությունը անհրաժեշտ է համարում նաև արտասահմանյան փոխառությունները:

Արտասահմանից փոխառություններ ստանալը մեզ հնանավորություն կտա գյուղատնտեսության, արդյունաբերության և տրանսպորտի մեջ կիրառել նոր (և բավականին խոշոր) միջոցներ, արագ կերպով բարձրացնել նրանց արդյունաբերությունը ու այդպիսով վերջնականապես վտաքի կանգնեցնել մեր ֆինանսները:

31. ՎՈՐՆ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Ներքին առևտրի ասպարեզում մեր կուսակցությունը հետամուտ է մասնավոր կապիտալին մի կողմ քշելու քաղաքականության, վորը, մանավանդ մանրավաճառք առևտրի մեջ, մեզ համար փտանկավոր դիրք է բռնել: *)

Դրա համար ել կուսակցությունը իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել է պետական և առանձնապես կոոպերատիվ առևտրի զարգացման և ամբապնդման, մեծաքանակ առևտրի ապարատի պարզացման, նրա աստիճանների, հետևապես նաև նրա վերադիր ծախսերի կրճատման, մի քանի, մանավանդ գյուղական միջավայրում, առանին գործածության և առանձնապես կարևոր ապրանքների (աղ, նավթ, շաքար) մանրածախս գների կանոնավորման վրա: Բոլոր այս միջոցները կիրառվում են ՄՏՈՂ-ին (Աշխատանքի և պաշտպանության խորհուրդ) կից գործող Ներքին Առևտրի հանձնաժողովի միջոցով: Այդպիսի հանձնաժողովներ կան նաև նահանգներում ու շրջաններում:

Կիրարկվող այս միջոցներին կառավարությունը խոշոր նշանակություն է տալիս, ի նկատի ունենալով, վոր պետական արդյունաբերությունը և գյուղական շուկայի ուղղակի մերձեցումը տեղի ունի առևտրական ապարատի միջոցով:

Արտաքին առևտրի ասպարեզում մեր կուսակցությունը հետամուտ է այն ամբողջովին իրեն վրա պահե-

*) Մեծաքանակ առևտուրը գլխավորապես գտնվում է պետության ձեռքում: Նա (կոոպերացիայի հետ միասին) կազմում է շրջանառության 85,5⁰/₁₀-ը: Մեծաքանակ մանրավաճառք (միջին) առևտուրը կիսով չափ գտնվում է կառավարության և կոոպերացիայի ձեռքին (49,6⁰/₁₀), մյուս կեսը գտնվում է մասնավոր կապիտալի ձեռքում (50,40⁰/₁₀): Մանրավաճառք առևտրի 82,40⁰/₁₀ գտնվում է մասնավոր կապիտալի ձեռքում:

լու մենաշնորհի (պետութեան կողմից ապրանքների արտածման ու ներմուծման բացառիկ իրավունք) քաղաքականութեան, վորը անտեսութեան, մանավանդ նոր անտեսական քաղաքականութեան պայմաններում, վաշտուն կերպով արգարացրեց իր վրա գրված հույսերը:

Արտածման աստիճանական զարգացումը (1921 թ. 20 միլ. վոսկի ուղբուղ մինչև 135 միլ. ուր. 1922-1923 թ.) և ներմուծման կրճատումը նպաստեցին արտածման գերակշռութեանը ներմուծմանի նկատմամբ (առևտրական ակտիվ հաշվեկշիռ), վորը ուժեղացնում է պետութեան վոսկու ֆոնդը (միջոցները): Կուսակցութիւնը նպատակադրել է հետագայում ել գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների համար արտաքին շուկաներ նվաճել և ուժեղացնել այդ ապրանքները արտածումը, միաժամանակ սահմանափակել ներմուծումը, արտասահմանից ստանալով միայն գործարանների և ֆաբրիկաների վերականգման ու ելեկտրոֆիկացիայի համար անհրաժեշտ պարագաներ, ինչպես նաև չբավարարող հում նյութեր ու կիսաֆաբրիկաներ (բամբակ, նուրբ բուրդ, ուետին, խոշոր կաշիներ և այլն):

32. ՎՈՐՆ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՍՊԱՐԵՋՈՒՄ

Սպառողական կոոպերացիայի ստեղծագործում կուսակցութեան քաղաքականութիւնը հետամուտ է իրականացնել Վ. Ի. Լենինի տված հիմնական լոզունգը. լայն մասսաների իրական մասնակցութիւնը կոոպերացիայում:

Մանրածախի համար գովառական և գյուղական շուկաներին գլխավորապես ծառայում են մասնավոր առևտուրն ու կոոպերացիան: Այդ շուկան ամբողջովին ընդգրկելու տեսակետից, կոոպերացիայի կառարած գործը տակավին չափազանց անբավարար է: Կոոպերատիվ

ցանցը գյուղում 25⁰/₀-ից ել պահատ է: Սրա պատճառները հետևյալներն են. — նախնական կոոպերատիվ բջիջները թուլութիւնը, վերագիր ծախսերի շատութիւնը, չափազանց մեծացրած հաստիքները, ապրանքների վատ ընտրութիւնը, հրահանգչական կազմի և առհասարակ գյուղական կոոպերատոր աշխատավորների բացակայութիւնը:

Ի նկատի ունենալով այս բացերը, կուսակցութիւնը սպառողական կոոպերացիայի առաջ գնում է հետևյալ մեծ ու պատասխանատու խնդիրը, — ստորին կոոպերատիվ բջիջները կազմակերպել և ուժեղացնել (ուղղակի վարկավորման ճանապարհով) այնպես, վոր նրանք ընդգրկեն ազգամասնական լայն մասսաները և իրենց ազդեցութեան յենթադրկեն մասնավոր առևտրի ապստամբները:

Պետական արդյունաբերութեան և մանր արտադրողի գյուղացու՝ կապը հանդիսանում է գյուղատնտեսական կոոպերացիան: Նա փոշիացած մանր անտեսութիւնների կազմակերպման մի ձևն է և անցողական աստիճանը մակաբնակչության մի ձևին և անցողական աստիճանը մանր արտադրողութիւններից դեպի կոմունիզմ: Դրա համար ել մեր կուսակցութիւնը անհրաժեշտ է համարում գյուղատնտեսական բանկի միջոցով խոշոր վարկավորումով ամեն տեսակի աշակցութիւն ցույց տալ գյուղատնտեսական կոոպերացիային:

Անհրաժեշտ է ամեն կերպ ուժեղացնել կոոպերատիվ սպարաւոր և շարունակել դեպի կոոպերացիան գրաւել գյուղական ազգաբնակչութեան լայն մասսաները:

33. ՎՈՐՆ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Մեր կուսակցութեան, — բանվոր դասակարգի կուսակցութեան քաղաքականութիւնը բանվորական հարցում,

կոմունիզմի շինարարութեան խնդրում, գերագույն կազմակերպողի դերը վերապահում է բանվոր դասակարգին:

Այն պետութեան մեջ, ուր իշխանութիւնը պատկանում է բանվոր դասակարգին, այտեղ և արդյունաբերութեան բաղադրձև իրեն իսկ իշխանութեան բաղադր սերտորեն կապված է բանվոր դասակարգի գրութիւնից:

Յենկելով այս տեսակետից, մեր կուսակցութիւնը բոլոր միջոցներով պայքարում է պրոլետարիատի գրութեան բարելավման համար:

Աշխատանքի տեւողականութեան խնդրում չնայելով արդյունաբերութեան ծանր պայմաններին, կուսակցութիւնը հաստատ կերպով պաշտպանում է ութ ժամյա բանվորական օրը, ձգտելով նրա հետագա կրճատմանը:

Աշխատավարձի խնդրում կուսակցութիւնը հանրապետութեան անտեսական կյանքի ուժեղացման և աշխատանքի արդյունավետութեան աճմանը համապատասխան, տանում է նաև այն բարձրացնելու քաղաքականութեան գիծը: Արհմիութիւնների միջոցով կիրառում է կոլլեկտիվ պայմանագրերը, ձգտում է աշխատավարձի հետագա բարձրացման արդյունաբերութեան այն ճյուղերում, վորտեղ նա գտնվում է միջակից ցածր մակարդակի վրա, թանկութեան հետանքով աշխատավարձին արած հավելումների միջոցով ձգտում է ապահովագրել այն:

Աշխատանքի պաշտպանութեան խնդրում կառավարութիւնը հետամուտ է արտադրողական պայմանների բարելավմանն ու առողջացմանը, պայքարում է արտաժամյա աշխատանքների դեմ, աշխատում է ստեղծել այնպիսի պայմաններ, վորոնք պիտի գան նվազեցնելու դժբախտ դեպքերի թիւը, հետամուտ է, վոր ձեռնարկութիւններից միանգամայն հեռացվեն փոքրահասակները, կրճատվեն անշափահասների աշխատանքները և պահպանվի նրանց առողջութիւնը, ինչպես նաև ամեն կերպ պաշտպանվի կանացի աշխատանքն ու մայրութիւնը:

Սոցիալական ապահովագրութեան խնդրում, վորը կապված է աշխատանքի պաշտպանութեան հետ, կուսակցութիւնը հետևում է մահվան դեպքերից, հիվանդութիւններից, հաշմանդամ լինելուց, գործազրկութեան և այլն ապահովագրելու քաղաքականութեան, հասցնելով, հիվանդութեան դեպքում, արվելիք նպաստի չափը փաստական աշխատավարձին, ձգտելով նույնն անել նաև համաշխանդամութեան դեպքում: Միջոցներ է ձեռք առնում ուժեղացնելու բժշկական ոգնութիւնը և այն բանվորին մոտեցնելու, ընդլայնելու սանատորական ու ամառանոցային բժշկութիւնը, ավելացնելու ծծմայրերին արվելիք նպաստը, աշակցութիւնը ցույց տալու հանգստի տներին և այլն:

Կենցաղի յեւ կուլտուրական խնդիրներում կուսակցութիւնը նպատակադրել է պետական վարկի ապահովման միջոցով զարկ տալ բնակարանային շինարարութեան, բանվորների համար կառուցել կոմունալ բնակարաններ, այդ գործին մասնակից անելով նաև արհմիութիւններին ու այդպիսով, բարելավել բանվորների բնակարանային պայմանները: Պայքարում է կոոպերացիան բանվորական մասսաներին մոտեցնելու համար, կիրարկում է հասարակական լայն անդառութիւն կազմակերպման ու կատարելագործում է բանվորական վարկը, ընդարձակում մսուրների, մայրական տների ու մանկատների ցանցը և այլն:

Կուլտուրական ասպարեզում կուսակցութիւնը նպատակադրել է զարկ տալ կրթութեան (գլոբոցական և արտադրողական) մաքսիմալ զարգացման, տրամադրելով այն առաջին հերթին և ամենից շուտ պրոլետարական տարրերին (բանվորներին և այլն), և կազմակերպել աւուժների, մանկատների, մանկապարտեզների ընդարձակ ցանց:

Բանվորական այսպիսի օրենսդրութիւնը շունի և վոչ մի յերկիր, դրանց թվում նաև այնպիսիները, վորոնք անհամեմատ հարուստ են մեզին:

34. ԻՆՁ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ Ե ՏԱԼԻՍ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ Ս. Խ. Շ. ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻՆ

Ս. ՆՍ. Շ. Միության շինարարական (քաղաքական և տնտեսական) հաջողությունների նշանակությունը այն է, որ միությունը համաշխարհային պրոլետարիատին գլխավոր կետերով մասնացույց է անում այն ճանապարհը, վերով ցածր ընթացող հեղափոխության զարգացումը: Ս. ՆՍ. Շ. Մ. հաջողությունները շինարարության ասպարեզում լավագույն կերպով, քան ամեն տեսակի պրոպագանդ, համաշխարհային աշխատավոր մասսաներին ցույց են տալիս, վոր բանվոր դասակարգը (դաշնակցած գյուղացիության հետ) գտնվելով իշխանություն գլխին և հնաշխույժ պատերազմի ու հեղափոխության պատճառած սոսկալի փլուզումին, կարող է ինչպես անտեսական, նույնպես և պետական շինարարության ասպարեզում—արագ թափով խոշոր հաջողությունների հանգել:

Ս. ՆՍ. Շ. Միությունը համաշխարհային բանվորական շարժման ամբողջ հանդիսանալով, հսկայական նշանակություն ունի բանվորական հարցի համար: Միության քաղաքական և տնտեսական ուժի հարածամ աճումը ծառայելու չէ վորպես հոստատու հենարան կապիտալիստական յերկրների և Արևելքի աշխատավոր մասսաների համար հեղափոխության հաջորդ որն իսկ, շինարարության ասպարեզում նրանց առաջին քայլերի ու մանավանդ ձեռք բերած հաղթության ամրապնդման ծանր ու բարդ խնդրի լուծման ժամանակ:

Դրա մեջ ել մեր կուսակցությունը տեսնում է ինքնհրդային Հանրապետության շինարարության խոշոր նշանակությունը:

35. ՎՐՆ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՑԱԾ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ

Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը (բոլշևիկները) հանդիսանում է համաշխարհային բանվորական շարժման առաջադր՝ Նա ալգալիսին հանդիսանում է նրա համար, վորովհետև նա աշխարհի բանվորական հեղափոխական կուսակցություններից առաջինն էր, վոր կատարեց պրոլետարական հեղափոխություն, վոր իշխանությունը գյուղացիության հետ դաշնակցած բանվոր դասակարգին հանձնելով իրագործեց կոմունիզմին հասնելու առաջին և հիմնական պայմանը:

Ու. Կ. Կ. (Բ) իր, ցարիզմի և կապիտալիզմի դեմ մղած 25—ամյա պայքարի ընթացքում, մթերել է հսկայական հեղափոխական փորձ: Բանվորական դասակարգի կան հաղթանակներին համախմբելու գործում մեր կուսակցության կատարած աշխատանքը, համաձայնողական կուսակցությունների դեմ պայքարելը, բանվորներին ու գյուղացիներին լայն մասսաներին մոտեցնելու համար խորհրդային պետության կառավարողները հարգարելը, խորհրդային պետության կառավարելը,—այս բոլոր հսկայական աշխատանքը համաշխարհային բանվորության համար հանդիսանում է այն ալգալիսին, ինչպես իր ազատագրության պայքարի համար, ինչպես իր ժամանակ ցուցմունքներ ցածր քաղի: Կապիտալիստական յերկար ժամանակի մեջ, զինված Լենինի

Ու. Կ. Կ. (Բ) իր աշխատանքի մեջ, զինված Լենինի ուսմունքով, համաշխարհային պրոլետարիատի և աշխատավոր ժողովուրդների համար, կապիտալիզմի դեմ մղած պայքարում հանդիսանում է ամենապատահալի զեկավարը ու նրանց ալգալիսին հաղթանակներ ներշնչողը:

36. ԻՆՁՊԵՍ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՇԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԻՐ ԿԱՊԵՐԸ

Համաշխարհային բանվորական շարժման հետ իր կապերը մեր կուսակցությունը իրականացնում է միջազգային

յին հեղափոխական կազմակերպութեան — Կոմունիստական
III Ինտերնացիոնալի միջոցով:

37. ԻՆՁ Ե ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ (ԿՈՄԻՆՏԵՐՆԸ)

III Ինտերնացիոնալն ամբողջ աշխարհի բանվորական Կոմունիստական կուսակցությունների միությունն է, վորի անմիջական ձգտումն է կապիտալիզմի տապալումը և խորհրդային կարգի ձևով պրոլետարիատի դիկտատուրա սահմանելը, իսկ նպատակն է՝ Կոմունիստական հասարակութեան կազմակերպումը:

38. ՅԵՐԲ ՍՏԵՂԾՎԵՑ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

III Ինտերնացիոնալը ծնվեց համաշխարհային (իմպերիալիստական) պատերազմի սկզբին իր քայքայումն ու խորտակումը դրսևորող կապիտալիզմի հոգի վրա: III Ինտերնացիոնալի զաղափարական հայրը՝ բոլշևիկների կուսակցությունն էր:

Տակավին պատերազմի սկզբին բոլշևիկական կուսակցությունը հատուկ մանիֆեստով կոչ արեց պատերազմին հակադրել միջազգային հեղափոխական կռիվ և պրոլետարիատի համար վտրպես առաջնագույն նպատակ՝ առաջադրեց ժողովուրդների իմպերիալիստական պատերազմը վերածել դատակարգների (պրոլետարիատի՝ բնդդեմ բուրժուազիայի) քաղաքացիական կռիվ և ստեղծել III Ինտերնացիոնալը:

Ռուսաստանում Հոկտեմբերյան պրոլետարական հեղափոխությունը, վոր պրոլետարիատի կողմից իշխանության իրական գրավման հանգեց, այն հնարավորություններ ընձեռեց զանազան յերկրների կոմունիստական

կուսակցությունները և խմբակցությունները համախմբվելու:

Այդտեղից ել 1919 թ. սկզբին Մոսկվայում ծնունդ առավ III Ինտերնացիոնալը *):

39. ՈՒՄՆԻՑ Ե ԿԱԶՄՎԱԾ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

III Ինտերնացիոնալը կազմված է այն հեղափոխական կուսակցություններից, վորոնք իրոք խզել են իրենց կապերը II Ինտերնացիոնալի համաձայնողական (սոց.~դեմոկրատական) կուսակցությունների հետ (II Ինտերնացիոնալի մեջ մտնում են այն կուսակցությունները, վորոնց նպատակը չի հանդիսանում կապիտալիզմի դեմ բացահայտ կռիվ մղելը և պրոլետարական դիկտատուրան, այլ բուրժուազիայի հետ համաձայնութեան գալով՝ հեղափոխությունը խանգարել և նրանց ոժանդակել):

Պատերազմը վերջանալու պես, տարրերային թափով դեպի III Ինտերնացիոնալն են հոսում բանվորական դատակարգի բարձր հեղափոխական ու ակալվ տարրերը: Բանվորութեան այդ հեղափոխական մասը համարյա բոլոր յերկրներում ել (Արևմուտքում և Արևելքում) կազմում են կոմունիստական կուսակցությունները, վորոնք պատերազմից հետո, անվերջ մասսայական հեղափոխական շարժումից հետո, տարեց-տարի աճում և զարգանում են: III Ինտերնացիոնալի մեջ մտնում են միայն այն կոմունիստա-

*) III Ինտերնացիոնալն ստեղծելու միտքը պատկանում է Վ. Ի. Լենինին, վորը հենց պատերազմի սկզբից առաջադրեց և հակառակ յեռանդով ու արիությամբ պաշտպանեց այն: Վ. Ի. Լենինը 1919 թ. նոյեմբերի 1-ին գրում էր, — «II Ինտերնացիոնալը, ուղղորտյունիզմից (բուրժուազիայի հետ համաձայնութեան գալով) հաղթված՝ մեռավ: Թող կորչի ուղղորտյունիզմը և կեցցի, վոչ միայն դատակարգներից (բուրժուազիայի բանակն անցած) այլ և ուղղորտյունիզմից մաքրված III Ինտերնացիոնալը:»

կան կուսակցությունները, վորոնք ընդունում են Կոմինտերնի կանոնադրությունը և նրա II Կոնգրեսի (համապոլմարի) կողմից առաջադրած 21 պայմանները լիովին:

Այս պայմանները Կոմինտերնին հարող յուրաքանչյուր կուսակցությունից պահանջում են, վոր նրանց ամբողջ պրոպագանդան ու ագիտացիան տարվի կոմունիստական հոգով, վոր նրանք ամուր կերպով կանգնած լինեն պրոլետարական դեկատատուրայի տեսակետի վրա, վոր իրենց շարքերից վտարեն բուրժուազիայի հետ համաձայնության եկող բոլոր ռեֆորմիստ—համաձայնականներին: Կոմինտերնի մեջ մտնող կուսակցությունները պարտավոր են բոլոր բուրժուական յերկրներում ստեղծել գաղտնի կազմակերպություններ, բանակում և գյուղում պրոպագանդա անել, պայքարել գաղութային քաղաքականության դեմ, աջակցել գաղութների բոլոր հեղափոխական—ազատագրական շարժումներին և այլն:

Այս պայմաններով Կոմինտերնը իր շարքերի մուտքը փակում է բոլոր յերերեսն և կոմունիստներն չձևակերպված ու կերպարանավորված կուսակցությունների առաջ: Ներկայումս Կոմինտերնի մեջ մտնում են 50-ից ավելի կուսակցություններ, վորոնց թվում խոշոր մասսայական կառավարություններ, ինչպես Ռուսաստանի կոմունիստական (բ.) կուսակցությունը, Գերմանիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Իտալիայի, Բուլղարիայի և այլ յերկրների կոմունիստական կուսակցությունները:

40. ՎՈՐՆ Ե III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԳՍՐԾԵԼԱԿԵՐՊԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ

III Ինտերնացիոնալը միջադրային միակ բանվորական կազմակերպությունն է, վոր ունի գոսակարգային աներեր հեղափոխական գործունեյություն: Բուրժուական պետությունների դեմ Կոմինտերնի պայքարի գլխավոր միջոցը՝

պրոլետարիատի մասսայական ցույցերն են մինչև զինված ապստամբությունը:

Մյուս կառավարությունների նկատմամբ Կոմինտերնի վերաբերմունքը հետևյալն է.—1) բուրժուազիայի բանակում մեր դեմ կուլող համաձայնողական (մենչեիկական) կուսակցությունների դեմ—անողոր պայքար, 2) այդ կուսակցություններին պատկանող շարքային բանվորների նկատմամբ, իրենց ղեկավարներից բաժանելու քաղաքականություն: Կուսակցության վերի խավերի դավաճանական գործունեյությունների մերկացում, 3) մյուս կազմակերպությունների հեղափոխական տարրի համախմբում և, ըստ հնարավորին, նրանց հետ համաձայնություն՝ ընդհանուր ուժերով կապիտալիզմի դեմ գործելու համար:

Այս հիմունքներով Կոմինտերնը կիրառում է բանվորական միասնական ճակատի գործելակերպը: Բանվոր կառակարգի վրա հարձակվող կապիտալի դեմ պայքարելու այս գործելակերպի էյությունը կապիտալիզմի և բանվորության մի մասի միջև, II Ինտերնացիոնալի մենչեիկների շնորհիվ, գոյություն ունեցող կապի խզումն է: Դրա համար անհրաժեշտ է հոգալ բանվորության (II Ինտերնացիոնալին, սինդիկալիստական կազմակերպություններին պատկանող և անկուսակցական բանվորների) առըյա կարիքները: III Ինտերնացիոնալը ղեկավարությամբ կոմունիստ բանվորների հետ միասին կապիտալի դեմ պայքարելու համար՝ նրանց էլ սլիտի կազմակերպել:

Այս գործելակերպը ունի և այն նպատակը, վորպեսզի, վորտեղ այդ հնարավոր և, ընդհանուր գործնական աշխատանքների նկատմամբ՝ համաձայնության դալ սոց.—դեմ. ղեկավարների հետ, և յեթե նրանք կխուսափեն նման համաձայնություններ կնքելուց—ամեն քայլափոխում մերկացնել նրանց: Կոմինտերնը գտնում է, վոր բանվորական միասնական ճակատի կանոնավոր կիրառումը լավագույն կերպով կոմունիստ բանվորներին կողնի բանվորական

ստվար մասսաների հետ միանալու, բանվոր հասակարգի մեծամասնութիւնը նվաճելու և նրանց համաձայնողական կուսակցութիւնների ազդեցութիւնից դուրս կորզելու: Յերկամյա փորձը ցույց տվեց, վոր, չնայելով այս գործերակերպի դժվարութիւններին, լավագույն հետեւիանքներ ե ունեցել, զգալիորեն բարձրացնելով III Ինտերնացիոնալի ազդեցութիւնը:

41. ՎՈՐՈՆՔ ԵՆ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԱՌԱՋ ԴՐՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՇԱՐՑԵՐԸ

Բացի բանվոր դատակարգի մեծամասնութիւնը նվաճելուց, համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան գլխավոր խնդիրներն են՝ զաղութային և ազգային ու գյուղացիութեան վերաբերյալ խնդիրները Յեվրոպայում և Ասիայի ու Աֆրիկայի հետամնաց յերկրներում (զաղութային հարց), հեղափոխական շարժումների մոտալուտ լինելու հարցը, առաջին անգամ, ամբողջական կերպով դրվել և միայն III Ինտերնացիոնալի կողմից: Իմպերալիզմը իր իսկ դերով ու բոլոր միջոցներով կանգնեցնելով Արևելյան (զաղութային) ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական զարգացումը, այդ ժողովուրդների ոտար կապիտալիստները դեմ մղած պայքարը, — կոմիւնները համարում ե իսկական աշակցութիւն համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան: Դրա համար ել բոլոր յերկրների ու ազգերի աշխատավոր մասսաների մերձեցումը, կապիտալիստներին ու կալվածատերերին տապալելու համար՝ անհրաժեշտ ե:

Առանձնապէս պիտի նեցուկ հանդեսանալ հետամնաց յերկրներում կալվածատերերի տիրակալութեան դեմ տեղի ունեցող գյուղացիական հատուկ շարժումներին ու աշխատավոր ել ավելի իրականացել արեւմտյան Յեվրոպայի պրոլետարիատի սերտ կապը արեւելքի, զաղութների և առ-

հատորակ հետամնաց յերկրների գյուղացիների հեղափոխական շարժումներին հետ:

Մյուս կողմից բոլոր բազմազգի պետութիւններում կոմկուսակցութիւնը ազգային հարցը ամենակարեւորագույն հարցերից մինը պիտի համարի, վորովհետեւ միայն այդ հարցի կանոնավոր լուծումը հնարավորութիւն կընձեռի աշխատավոր մասսաներից կոմունիստական առաջավոր պրոլետարիատի շարքերը դրավելու:

Ռուսական հեղափոխութեան որինակին հետեւելով, կոմիւնները, վորպէս կարեւորագույն հարց, առաջ ե քաշում հեղափոխութեան մեջ գյուղացիութեան ունեցած դերը: Շատ յերկրներում, վորտեղ բանվորութիւն կա, բուրժուական իրավակարգը տապալել առանց պրոլետարիատի ու գյուղացիութեան միութեան, կոմիւնները գտնում ե անհնարին:

Ուստի և գյուղացիական հեղափոխական կազմակերպութիւններին (մանավանդ հողագործական յերկրներում, վորտեղ գյուղացիութիւնը նշանակալից դեր ե խաղում) գործոն աշակցութիւն ցույց տալը անհրաժեշտութիւն ե:

Ուստի և կոմիւններին առաջադրած «Բանվորա-գյուղացիական կառավարութիւն» լոզունգը նույնպէս անհրաժեշտ ե, վորը գյուղացիներին պիտի ասի. — Եկեք միասին վոչնչացնենք հարուստների պետութիւնը և ստեղծենք աշխատանքի պետութիւն:

Կապիտալիստական պետութեան դեմ բանվորների և գյուղացիների միասնական ճակատը՝ միայն այս հիմունքներով ե հնարավոր:

42. ԻՆՉ ՍԿՋՐՈՒՆՔՈՎ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Ամբողջ աշխարհում միասնական հեղափոխական գործունէութիւն ունենալու սկզբունքներով:

III Ինտերնացիոնալը կազմված է զանազան յերկր-
ների կոմունիստական կուսակցութիւններից:

Բայց նա ինքնին մի կազմակերպութիւնն է, վորի
մեջ ազգային շահերը յենթարկված են միջազգային շա-
հերին: III Ինտերնացիոնալը լինելով պրոլետարական հե-
ղափոխութեան ինտերնացիոնալը, համաշխարհային պրոլե-
տարիատի միակ կազմակերպված ուղղանքը, հանդիսանում
է վորպէս համաշխարհային հեղափոխութեան համար կեն-
տրոնական գլխավոր շտաբ, զորս համար եւ նա վոչ թե մի-
ութիւնն է միմիանց հետ պայմանավորված զանազան
կուսակցութիւնների, այլ համաշխարհային մասշտաբով մի
կոմունիստական կուսակցութիւնն է. այլ կերպ հա-
մաշխարհային պրոլետարական հեղափոխութիւնն իրա-
զործել անկարելի է:

Լինելով այդպիսի կենտրոնացած ու ուղղական կազ-
մակերպութիւն, III Ինտերնացիոնալը հանդես է գալիս
վորպէս մի հզոր բանակ, վորը, միջազգային համագումար-
ների և կենտգործկոմի միջոցով, շարկապված է միաս-
նական կամքով ու ղեկավարութեամբ:

III Ինտերնացիոնալը Գործադիր Կոմիտեն աշխ-
ընտրվում է վոչ թե յուրաքանչյուր կուսակցութեան կող-
մից առանձին, այլ միջազգային համագումարում, ճիշտ
այնպէս, ինչպէս վոր տեղի յեն ունենում յուրաքանչյուր
յերկրի կոմունիստական կուսակցութիւնների կենտրոնա-
կան Կոմիտեների ընտրութիւններն առանձին — առանձին:

43. ԻՆՉՈՒ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱ- ՊԻՏԱԼԻՉՄԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԵԼԸ ԱՆԻՈՒՍԱՓԵԼԻ ՅԵ

Կապիտալիզմ նշանակում է կապիտալիստների կողմից
բանվոր դասակարգի շահագործում, նրանց համար անա-
պահով վիճակ և գործազրկութեան ստեղծում, վարձակալ-
ներից ծանր պայմաններով կախված լինելու գրութիւն

և կապիտալիստների կողմից մշտական ճգում՝ վատթա-
րացնելու բանվորութեան աշխատանքի և կյանքի պայ-
մաները:

Կապիտալիզմի դարգացմանը անխուսափելիորեն հե-
տևում են պատերազմներ, մանավանդ նրա վերջին շրջա-
նում — իմպերալիզմի ժամանակ, յերբ կապիտալի տիրապե-
տութիւնը անխուսափելիորեն կառված է վորջան կարե-
լի է շատ յերկրների ու ժողովուրդների նվաճման ու
կողոպտի հետ:

Կործանարար ու ավերող պատերազմները և նրանց
համար մշտական պատրաստութիւններն ու սպառնալիքը,
ամենից առաջ հարվածում են բանվոր դասակարգին և
ուժեղացնում կապիտալի դեմ նրա պայքարը: Այսպիսով
կապիտալն ինքը բանվոր դասակարգին անխուսափելիորեն
մղում է դեպի կռիւ և նախապատրաստում է նրան
կապիտալիզմը վոչնչացնողը և նրա գերեզմանափորը
լինելու:

44. ԻՆՉ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ Ե Ա- ՋԱՍԱԳՐՎԵԼ ԿԱՊԻՏԱԼԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՑ

Միայն հեղափոխութեան ու պրոլետարիատի դիկտա-
տուրայի ճանապարհով, կռիւով կոմունիստական կուսակ-
ցութեան ղեկավարութեամբ: Այն բոլոր խոսակցութիւն-
ները, վոր իբր թե հնարավոր է բուրժուական ուղեւորների
և պարլամենտի ճնշմամբ կապիտալի կողմից իշխանու-
թեան խաղաղ հանձնումը (ինչպէս այդ ուսուցանում են
մենշևիկներն ու II Ինտերնացիոնալը), սուտ են: Մեկ-մե-
կու թշնամի դասակարգի շահերը և այդ հողի վրա տեղի
ունեցող դասակարգային պայքարը — անհաշտելի յեն: Քա-
ղաքական իշխանութեան գրավման և պրոլետարիատի դիկ-
տատուրա սահմանելու համար, դասակարգերի միջև տեղի
ունեցող պայքարը վերջ ի վերջո վեր է ածվում քաղա-
քական կռիւի, այսինքն դասակարգերի — բուրժուազիայի
և պրոլետարիատի — բացարձակ բաղիման:

45. ՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՅԵՎ ՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ԴԵՍ ՊԻՏԻ ՊԱՅՔԱՐԵՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Ռուսական հեղափոխութեան փորձը ցույց տվեց, Վոր կալվածատերերի և կապիտալիստների դեմ ուղղված պրոլետարական հեղափոխութեանը, միայն պրոլետարիատի և գյուղացիութեան դաշնակցութեամբ կարող է հաջողութեամբ ունենալ: Այս դաշնակցութեանը, ինչպես ասում եր Վ. Ի. Լենինը, պետք է հասկանալ, — պրոլետարիատը գյուղացիութեանը ազատում է բուրժուազիայի շահագործումից, պրոլետարիատը գյուղացիութեան դեպի իրեն և գրավում, վորպեսզի միասին հաղթեն շահագործողներին: Այս դաշնակցութեանը ձեռքնառն է գյուղացիութեան, սակայն միևնույն ժամանակ նա ուժեղացնում է նաև պրոլետարիատին:

Սրանից հետևում է, Վոր բոլոր յերկրների (բուրժուական) բանվորները գյուղացիութեան հետ դաշնակցած, պիտի պայքարեն խոշոր կալվածատերերի ու կապիտալիստների դեմ:

Այս կովում վերջիններին պիտի եքսպրիտարացիայի յենթարկել (նրանցից պիտի խլել հողերը, ֆաբրիկաները, գործարանները, փողերը) և իրենց ել գուրս վունդել: Մանր արգյունարերողներին, մանր սեփականատերերին, ընդհակառակը, պիտի գրավել և մի շարք մանր գիշումների դնով համաձայնութեան գալ:

Բանվորութեան և աշխատավոր մասսաների դաշնակցութեանը միջազգային մասշտաբով առաջադրում է այնպիսի անտեսական քաղաքականութեան, Վորը մեզ մոտ ստացել է անտեսական նոր քաղաքականութեան անունը:

46. ԿԱՊԻՏԱԼԻՆ ՇԱՂԹԵԼՈՒ ՇԱՄԱՐ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԶԵՆՔՈՒՄ ԻՆՁՆ Ե ՇԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԶԵՆՔ

Այդ գեները պրոլետարական մարտական կուսակցու-

թեանն է — կոմունիստական կուսակցութեանը: Այդպիսի կուսակցութեան անհրաժեշտ է, Վորպեսզի հեղափոխութեան նախաստորտաման բարդ գործը, հեղափոխութեան ղեկավարութեանը և առաջ բանվորական պետութեան (պրոլետարիատի դիկտատուրայի հիմունքներով) շինարարութեանը համութեամբ ու անկունութեամբ իրագործվի: Կոմունիստական կուսակցութեանը բանվորական ամենագիտակից, առաջադեմ և հեղափոխական մասի կուսակցութեանն է, նրա ավանդադրը (առաջապահ գունդը): Նա կազմակերպված է ամենախիստ կենտրոնացման սկզբունքներով և բոլոր արտակուսակցական կազմակերպութեաններում ունի համակուսակցական կարգապահութեանը յենթարկվող իր բջիջները:

Կոմիստները վճռականորեն մերժում է այն անտակալ, Վոր իբր թե պրոլետարիատը չունենալով ինքնուրույն քաղաքական կուսակցութեան, կարող կլինի կատարել իր հեղափոխութեանը: Յուրաքանչյուր դասակարգային պայքար միաժամանակ քաղաքական պայքար է: Այդ պայքարի, — Վոր անխուսափելիորեն դասակարգերի քաղաքական կռիվ է վերածվում, — նպատակը քաղաքական իշխանութեան նվաճումն է:

Սակայն կազմակերպված և վորոշ նպատակի ուղղված քաղաքական իշխանութեանը այլ կերպ հաջողութեամբ ձեռք ձգել չի կարելի, քան տվյալ դասակարգի քաղաքական կուսակցութեան միջոցով:

Ահա թե ինչու կապիտալիզմին հաղթելու համար բանվորութեան համար վորպես անհրաժեշտ գեներ հանդիսանում է կոմունիստական կուսակցութեանը:

47. ՈՒՄ ԴԵՍ ՊԻՏԻ ԿՈՎԵՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՉՄԸ ՏԱՊԱԼԵԼՈՒ ՇԱՄԱՐ

II Ինտերնացիոնալում համախմբված մանր բուրժուական, համաձայնողական կուսակցութեանների, ինչպես նաև Ամստերդամի Արհմիութեան Ինտերնացիոնալի դեմ:

48. ԻՆՉ Ե ՈՒ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

II Ինտերնացիոնալում համաժամեցված են այն սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական կուսակցություններն ու բանվորական կազմակերպությունները, վորոնք խոսքով ընդունում են դատակարգային պայքարի սկզբունքները և կապիտալիզմը սոցիալիզմով փոխարինելու անհրաժեշտությունը, սակայն զործով վարում են բանվորության և սլրոկետարական հեղափոխության դեմ կապիտալիստներին աջակցելու քաղաքականություն:

II Ինտերնացիոնալը կազմակերպվել է 1889 թ.: Մինչև 1914 թ. այսինքն մինչև համաշխարհային պատերազմը, նա իր շուրջն էր հավաքել բանվորություն: Սակայն II Ինտերնացիոնալը չունենալով հեղափոխական գործողությունների կազմակերպություն, չափազանց անկայուն մի միություն էր: Նրա համագումարների բոլոր վորոշումները նրա մեջ մանող առանձին կուսակցությունների համար պարտավորեցուցիչ ուժ և նշանակություն չունեին: Համաշխարհային (իմպերիալիստական) պատերազմի ծագման մոմենտին II Ինտերնացիոնալը ամենախայտառակ կերպով դավաճանեց բանվորության, ակնհայտ կերպով ցույց տվեց, վոր Ինտերնացիոնալը «Բանվորներ բոլոր յերկրների, միացեք» լոզունգը նրա համար յեղել է մի դատարկ հնչյուն և խաբեյություն: 1914—1918 պատերազմը II Ինտերնացիոնալին անկման ու քայքայման վիճակի հասցրեց:

Համաշխարհային պատերազմից հետո II Ինտերնացիոնալը վերստին կազմակերպվեց: Նախկին՝ 1914 թ. պատերազմի սկզբին, բանվորության դավաճանող և բուրժուազիայի՝ պատերազմից հետո վարած քաղաքականության հետ իր կապերը չխզած սոցիալ-դեմոկրատական (մենչևիկական) կուսակցությունները նորից համախմբվեցին II Ինտերնացիոնալի շուրջը: Հանձինս II Ինտերնացիոնա-

լի, բուրժուազիան սլրոկետարիատի վրա հարձակվելիս իր դաշնակիցն ունի: II Ինտերնացիոնալը քայքայելով սլրոկետարիատի շարքերը, նրանց հեռացնում է հեղափոխությունից և կապիտալի դեմ ուղղակի պայքար մղելու նպատակից և տանում բուրժուազիայի հետ համաձայնություն գալու ճանապարհով:

II Ինտերնացիոնալը կատաղի թշնամանք է տածում դեպի Սորերգային հանրապետությունները:

II Ինտերնացիոնալը 1920 թ. նոյեմբերին իր «բանվորությունն ուղղված Մանիֆեստով» կոչ է անում բանվորության կուլել «բոլշևիկներ թոնակալական դիկտատուրայի» դեմ: *)

Բանվորության համար, հարձակվող կապիտալի դեմ պայքարելու միակ նեցուկ հանդիսացող բանվորական միասնական ճակատ կազմելու առթիվ, II Ինտերնացիոնալը, 1922 թ. հուլիսի Լոնդոնի կոնֆերանսում հայտնեց, վոր ինքը կոմիսներնի հետ միջազգային նշանակություն ունեցող և վոչ մի վորոշման չի մասնակցի: Այս հայտարարությունը գործնականի մեջ նշանակում է հրաժարվել կապիտալի դեմ ամեն տեսակի պայքար մղելուց:

Նրա համար ել բանվոր դատակարգի աղատության համար II Ինտերնացիոնալի դեմ պայքարելը նույնքան անհրաժեշտ է, վորքան կապիտալիզմի դեմ:

49. ԻՆՉ Ե ԱՄՍԵՐԴԱՄԻ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Մինչև պատերազմը միջազգային սլրոֆեսիոնալ կադմարկերպությունների միություններ ստեղծելու համար թույլ փորձեր էյին կատարվում միայն: 1913 թ. հիմնվում է սլրոֆեսիոնալ միությունների միջազգային ֆե-

*) Այսպես են անվանում III Ինտերնացիոնալին և նրա մեջ մանող ամենաազդեցիկ Ռ. Կ. Կ. (բ) կուսակցությունը:

դերացիան: Նա յերկար կյանք չունեցաւ, վերսկիտեալ աւստերազմը սկսվելուն պէս, համարյա բոլոր պատերազմող յերկրներն պրոֆմիություններն զեկամարները բուրժուազիայի կողմն անցան և պրոֆմիություններն միջազգային կազմակերպությունը քայքայվեց:

Պատերազմից հետո 1919 թ. հուլիսին Ամստերդամի (Հոլանդիա), պրոֆմիություններն միջազգային կոնֆերանսում վերականգնվեցին Համաձայնողական Ինտերնացիոնալի պրոֆմիությունները (այդ միություններն կենտրոնի համար մշտական վայր ընտրվեց Ամստերդամը: Այստեղից ել նա իր «Ամստերդամի» անունն ստացաւ):

Ամստերդամի պրոֆմիություններն Ինտերնացիոնալը իր ամբողջ քաղաքականությունը հիմնում է համաշխարհային բուրժուազիայի հետ դաշնակցելու և պրոֆշարժումների մեջ յեղած հեղափոխական հոսանքների (մինչև անշատման հասնող) Կոմունիստական կուսակցության դեմ պայքարելու վրա:

Բանվորության պրոֆեսիոնալ պահանջների իրագործման վորպես գլխավոր միջոց, այս Ինտերնացիոնալն ընտրել է, այսպէս կոչված, Ազգային Լիգա (Ֆրանսիային ու Անգլիային առընթեր մի գրասենյակ մյուս ազգերին ճնշելու համար), իր աշխատանքի բյուրոյով Սա ամենաթալանչի իմպերիալիստական պետությունների միջազգային մի կազմակերպություն է:

Պարզ է, վոր բանվորությունը այս կազմակերպության դեմ ել վճռականորեն պիտի պայքար մղի:

50. ԿՈՄՆՏԵՐՆԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ Ե՛Լ ԻՆՉՊԻՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Դրանք են, — առաջին՝ պրոֆմիությունների Կարմիր Ինտերնացիոնալը (Պրոֆինտերն), յերկրորդ՝ Գյուղացիական Միջազգային Խորհուրդը, և յերրորդ՝ Յերիտասարդ Կոմիտեներն Ինտերնացիոնալը:

51. ԻՆՉ Ե ՊՐՈՖԻՆՏԵՐՆԸ

Պրոֆինտերնը, վորպէս միջազգային պրոֆեսիոնալ շարժումների հեղափոխական խավերի կազմակերպություն, հիմնվել է 1920 թ. հուլիսի 15-ին: Կարմիր Ինտերնացիոնալի պրոֆմիության անդամներ կարող են լինել բոլոր հեղափոխական անտեսական դասակարգային կազմակերպությունները, վորոնք իրենց ամենորյա աշխատանքների մեջ կանգնած են հեղափոխական դասակարգային պայքարի դիրքերում, ինչպէս նաև այն կազմակերպությունները, վորոնք սոցիալիստական հեղափոխությունը և կոմունիզմին անցնելու անցողական շրջանի պրոլետարական դիկտատուրան անհրաժեշտ են համարում, կապիտալիզմի վոճնացման համար:

Պրոֆինտերնը գտնում է, վոր ներկա դասակարգային պայքարը պահանջում է պրոլետարական ուժերի սերտ համախմբում և նրա միությունը հեղափոխական կռիւմ:

Դրա համար ել նա ձգտում է համաշխարհային հեղափոխական բանվորական շարժման առաջադահի — Պրոֆինտերնի հետ, ըստ հնարավորին, ել ավելի ամուր կապերով կապվել: Դրա հետ միաժամանակ Պրոֆինտերնը իրեն նույնատակ և դրել կռվելու Ամստերդամի Ինտերնացիոնալի դեմ:

52. ԻՆՉ Ե ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴԸ

Միջազգային Գյուղացիական Խորհուրդը կազմակերպվել է 1923 թ. հոկտեմբերին Մոսկվայում հրավիրված միջազգային գյուղացիական համագումարում:

Գյուղացիական այդ խորհուրդը միջազգային գյուղացիական կազմակերպություններն համար պիտի կենտրոն հանգիստանա՝ պայքարելու կապիտալիստների ու կալվածատերերի կեղեքումներից նրանց ազատագրելու համար:

Միջազգային դյուղացիական համագումարը ընդունեց, վոր ինչպես ազգային դյուղացիական միությունների, նույնպես և բոլոր միջազգային կազմակերպությունների դերագույն հոգսը՝ դյուղի և քաղաքի շաղկապը պիտի լինի: Կազմակերպված դյուղացիության և պրոլետարիատի միջև պիտի ամենասերտ կապ հաստատվի, կապիտալի դեմ՝ աշխատավորության շահերի պաշտպանության առթիվ միասին կռիվելու համար: Դրա հետ միաժամանակ Միջազգային Գյուղացիական Մորհուրդն առաջարկում և պաշտպանում և Կոմիսներին «Բանվորա-Գյուղացիական կառավարության» լուղունը:

Այսպիսով, Կոմիսներնը, հանդերձ այս նոր կազմակերպության, մի խոշոր դաշնակից ուժ և ձեռք բերում:

53. ԻՆՁ Ե ՅԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿՈՍՈՒՆԻՍԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱ-ՑԻՈՆԱԼԸ

Յերիտասարդների Կոմունիստական Ինտերնացիոնալը ձևակերպվել և Կոմիսներին հարկ և 1919 թ. նոյեմբերին՝ Նա արդեն 800.000 ավելի անդամ ունեցող բավականին ուժեղ և ամրակուռ մի կազմակերպություն է: Յերիտասարդ Կոմունիստների Ինտերնացիոնալի գործունեությունն ծրագրում մասնաճյուղված և Կոմունիստական կուսակցությունների կողմից նրանց անդամային աջակցելու և յերիտասարդ բանվորության անտեսական պայքարի գեկավարության հարցերը:

Յերիտասարդների Ինտերնացիոնալը, կազմակերպելով հարյուր հազարավոր լավազույն հեղափոխական յերիտասարդների, Կոմիսներին համար հանդիսանում և այն հուսաատու նեցուկը, վոր անցնելով Կոմունիստական դասախարակության և պայքարի հոյակապ դպրոցը՝ պատրաստ և նրան փոխարինելու:

54. ՎՈՐՈՆՔ ԵՆ ԿՈՍՒՆՏԵՐՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՅԵՎ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՆԸՎԱՏԱՄԲ

Պրոլետարիան հեղափոխության զարգացման ու նրա հաղթանակի նկատմամբ Կոմիսներնը հետևյալ տվյալներն ի նկատի ունի. — 1) կապիտալիստական անտեսության փլուզումը, 2) համաշխարհային պրոլետարական հեղափոխական շարժումների և Կոմունիստական կուսակցությունների աճումը, 3) II Ինտերնացիոնալի համաձայնողական կուսակցությունների քայքայումը, 4) արևելյան յերկրներում հեղափոխական շարժումների աճումը:

Բուրժուազիան անգոր հանդիսացավ վերականգնել պատերազմի հեռանքով Յեվրոպայի քայքայված տնտեսությունը: Յեվրոպական կապիտալիստական հասարակական կարգը, չնայած բուրժուազիայի բոլոր ճիգերին՝ անտեսական հավասարակշռություն ստեղծելու, — իր քայքայման պրոցեսն և ապրում: Կապիտալիզմին անհրաժեշտ շուկաներ ձեռք բերելու համար մղվող պայքարը վոչ մի ոգուտ չի տալիս, վորովհետև ազգերի միացմամբ սպառման շուկաները կրճատվել են: Գաղութները, վորոնք մի ժամանակ հսկայական քանակությամբ ապրանքներ եյին կլանում, այժմս նշանակալից չափերով գործ են ածում իրենց սեփական արտադրության ապրանքները:

Սրան զուգընթաց ալենհայտ և դառնում բուրժուազիայի քաղաքական դրությունը անկայունությունը: Այս յեվրոպյի արտահայտված և նրանով, վոր միջազգային բուրժուազիան անկարող յեղավ Յեվրոպայում խաղաղություն հաստատել ու մինչև որս էլ կապիտալիստական պետությունները շարունակում են գլինվել, վոր ինքնին մի պերճախոս ապացույց և նրանց կողմից պատերազմի մի արտաբանություն: Մրցում ու պայքար տեղի ունի վոչ միայն խոշոր պոտությունների (Անգլիայի, Ֆրանսիայի,

Իտալիայի), այլև փոքր պետութիւնները (Բուլղարիայի, Սերբիայի, Հունաստանի, Ռումանիայի) միջև:

Այս պայքարը, գրեթե ամենուրեք, ուժեղացնում է Փաշլիզմի զարգացումը: Փաշլիզմը բուրժուազիայի մարտահան կազմակերպութիւն է, ազդեցնական ու խմբերիալիստական վառ գունավորումով: Փաշլիզմի զարգացումը անխուսափելիորեն սրում է դասակարգային պայքարը կապիտալիստական պետութիւն մեջ և պատերազմները զանազան պետութիւնների միջև (ապացույց՝ Իտալիայի հարձակումը Հունաստանի վրա):

Այդ հողի վրա, մի շարք մեծ յերկրներում ծավալվում և սրվում են հեղափոխական շարժումները: Կազմակերպւած կապիտալի դեմ տնտեսական պայքարի ոտնորկի միջոցների կիրառումը (գործադուլները, արհմիութիւնների գրամարկդային միջոցները և այլն), այժմ անբավարար են: Բանվորները այժմ հարկադրւած են ավելի հաճախ դիմելու պայքարի վճռական (մաստայական գործադուլներ, ցույցեր, ապստամբութիւններ) միջոցներին:

Այսպիսով բանվորական շարժման ղեկավարութիւնը ավելի ու ավելի է անցնում Կոմունիստական կուսակցութիւնների ձեռքը և Կոմիւնտերնին ամբողջովին: Կոմիւնակցութիւնները, չնայելով նրանց դեմ ուղղված հալածանքներին, միակ կուսակցութիւններն են, վերոնք զրտնովում են իրենց ամփոփում և որսալու ամբապնդում են:

Բանվորական քաղաքական ակտիւութիւն է ամբակուռ կազմակերպութիւն հետևանքի, ամենատուժեղ կապիտալիստական յերկրում, — Անգլիայում բանվորական կառավարութիւն կազմելը: Բանվորական կառավարութիւնների կազմում հնարավոր է նաեւ մի շարք այլ պետութիւններում: Սա դեռ հեղափոխութիւն չէ, սակայն լավագոյն ապացույց է, վոր բանվորութիւնը կապիտալիզմի ճնշումներից և փտանգներից ազատագրւելու հա-

մար ուղիներ է վորոնում: Բայց, բանվորութիւն շատ մասսաները այդ կառավարութիւնների գործունեութիւնները տեսնելով, կհամոզվեն, վոր բուրժուազիային բռնութիւն հեռացնելով և իշխանութիւնը գրավելով միայն կապահովի բանվորութիւն և ընդհանրապէս աշխատավորութիւն շահերը: Այս սխալմաններում կոմունիստական կուսակցութիւնների նշանակութիւնն ու ազդեցութիւնը զգալիորեն աճելու յի:

Այն հանգամանքը, վոր բուրժուական պետութիւններն (Անգլիա, Գերմանիա) իրենց գոյութիւն հենարան են վորոնում ու գտնում վոչ թէ բանակի մեջ, անգամ վոչ Փաշլիզմի մեջ, այլ սոցիալ դեմոկրատիայի մեջ, — այդ հանգամանքն ավելի քան ցայտուն կերպով վկայում է այդ դավաճան կուսակցութիւնների, հեղափոխութիւնն ու նրա հաղթանակի ճանապարհի այդ վերջին խոչընտոտների վախճանի սկիզբը:

Մի շարք խոշոր կապիտալիստական պետութիւնները (Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի և այլն) կողմից Ս. Խ. Հ. Միութիւն ճանաչումն ապացուցում է խորհրդային հանրապետութիւնների քաղաքական ու տնտեսական կարողութիւն խոշորագուն աճումը, վորը հանդիսանում է գերագոյն առնափառչյան այն ոգնութիւն, վորպիսին Ս. Խ. Հ. Միութիւնից ակնկալելու յի պրոլետարական հեղափոխութիւնը: Վերջապէս մատնանշելու յի արեւելեյան յերկրներում աճող ու զարգացող ազգային հեղափոխական շարժումները, կապիտալիստական պետութիւնփոխական շարժումները, Անգլիայի, Ֆրանսիայի և այլն) կողմից արեւելեյան այդ յերկրներից խոշորագոյնները (Հնդկաստան, Չինաստան, Պարսկաստան և այլն) յենթարկւում են կողոպուտի: Արեւելեյան յերկրների աշխատավորութիւն, կողոպուտի պայուցիւթիւն, կողոպտելն ու ճորտապիտալիստական պետութիւններում վոչ պակաս քան կապիտալիստական պետութիւններում բանվորութիւնը շահագործելը, հանդիսանում է համաշխարհային բուրժուազիայի ուժի հենարանը:

Այդ կողպատման ու ճնշման քաղաքականութեան հետեանքով արեւելքում ակելի ու ավելի յեն ուժեղանում բանվորական ու գյուղացիական մասսայական շարժումները, այդ շարժումները միանալով պրոլետարիատի հեղափոխական պայքարի հետ՝ արագացնում են կապիտալիզմի անկումը:

Յեղակետ ունենալով այս պայմանները, Կոմիւնները իր քաղաքականութեան գիծը տանում ե պրոլետարական հաղթական հեղափոխութեան հունով:

55. ԿՈՍՏԵՆՏԻՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԴԵՍ ՍՂԱԾ ԻՐ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԻՆՉ ՈՒՍՍՈՒՆՔԻ ՅԵ ԿՈՅՆԵԼ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՍՏԻՆԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՍԱՐ:

Կոմիւնները կապիտալիզմի դեմ մղած իր պայքարում և համաշխարհային հեղափոխութեան ու կոմունիզմի հաղթանակի համար կռիւնել ե Կարլ Մարքսի (այլ կերպ՝ մարքսիզմի) պլյուս վ. ի. Լենինի ուսմունքի վրա:

56. ԻՆՉ Ե Կ. ՄԱՐՔՍԻ ՈՒՍՍՈՒՆՔԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին անգամ Մարքսը գիտականորեն ապացուցեց, վոր կապիտալիզմի զարգացմանը անխուսափելիորեն հետեւելու յե նրա խորտակումը և պրոլետարիատի դիկտատուրան:

Մարքսը ուսուցանում եր, վոր կապիտալիզմից կոմունիզմը թեակոխելու շրջանում կը լինի անցողական մի հասարակարգ, վոր այդ հասարակարգը կը լինի պրոլետարիատի դիկտատուրան, և վոր պրոլետարիատը կապիտալիզմի դեմ մղած իր պայքարում պիտի գեղի իրեն զրավի մանր բուրժուալիային (գյուղացիութեան):

Մարքսի ուսմունքի ուժն ու նշանակութեանն աշխարհը հեղափոխականորեն վերաշինելու մեջ ե կայա-

նում: Ինքը Մարքսը իր ժամանակի մեծագույն հեղափոխականը լինելով, առանյակ տարիներ առաջ նախագծել եր կոմունիզմի հիմնական իդեյաները:

Այն ժամանակ յերը ապրում եր Մարքսը (կապիտալիզմի սաղմնավորման ու զարգացման շրջանում), նա կարող եր այդ հարցերի միայն տեսական լուծումը տալ: Ինչպես վերաշինել աշխարհը: Ինչ ձեւերով պիտի իրականացվի պրոլետարիատի դիկտատուրան: Ինչպես հաստատել բանվորութեան ու գյուղացիութեան դաշինքը: Ինչպես այդ դաշինքը պատվար դարձնել Բուրժուազիայի դեմ պայքարելու համար: Կապիտալիզմից կոմունիզմին թեակոխելու անցողական շրջանում ինչպես պիտի կազմակերպել պետութիւնը, — այդ հարցերին մարքսյան ուսմունքը վորոշ գործնական պատասխաններ չի տվել:

Մեր ժամանակներում կոմունիզմը կյանքում մարմնավորելու համար, բանվորութեանը արդեն հարկավոր եր մտքի և գործի մի այնպիսի մեծ հեղափոխական, վոր արդեն աշխարհի վերաշինութեանն ընդհուպ մոտենար և տար այն ուսմունքը, թե ինչպես յեվ ինչպիսի ուժերով վերաշինել այն: Այդ հսկայական աշխատանքը կատարեց վ. ի. Լենինը:

57. ԻՆՉ Ե Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՈՒՍՍՈՒՆՔԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

վ. ի. Լենինը, — հեղափոխութեան մի այլ դարաշրջանում, կապիտալիզմի նեխման ու քայքայման (իմպերիալիզմի) շրջանում, — հանդիւսանում ե Մարքսի անմիջական հաջորդը: Այս հանգամանքը հնարավորութիւն տվեց նրան հեղափոխական մարքսիզմին կռիւնելով ոգով և ուսմունքով և միջազգային բանվորական շարժումների հարստացումը և տալ պրոլետարական հեղափոխութեան և պրոլետարիատի դիկտատուրայի, պրոլետարիատի դասակարգային պայքարի ու գյուղացիութեան կալվածա-

տերերի դեմ մղած կռվի, ինչպես նաև ճնշված ազգութ-
յունների ազգային-ազատագրական պայքարի միացման,
կուսակցության՝ հեղափոխության և կոմունիստական շի-
նարարության մեջ ունեցած դերի, խորհրդային պետու-
թյան և բուրժուական ու պրոլետարական դեմոկրատիայի
մասին իր Լենինյան ուսմունքը:

Վ. Ի. Լենինը տվել է իր ուսմունքի վոչ միայն խո-
րր տեսական մշակումը, այլ և վորպես հեղափոխական
պրակտիկի հանձարեղ ստեղծող, նաև տվելի առաջ գնաց
ու ցույց տվեց Մարքսյան ու իր ուսմունքի կյանքում
կերպանավորելու ուղիներն ու միջոցները, դարձնելով այն
միջազգային բանվորության կապիտալիզմի դեմ մղած
պայքարի համար հսկայական առաջնորդ ուժ:

Ահա թե ինչու կոմունիզմի համար համաշխարհային
բանվորության կապիտալիզմի դեմ մղած պայքարի հեղա-
փոխական շարժումները գլխավորող Կոմինտերնը հիմնվում
է Վ. Ի. Լենինի կողմից ստեղծագործական լրացումների
յենթարկված ու կյանքում մարմնավորված Կ. Մարքսի
ուսմունքի վրա:

58. ՎՈՐՆ Ե ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Կոմինտերնի վերջնական նպատակը՝ կոմունիստական
հասարակակարգ ստեղծելն է:

59. ՎՈՐՆ Ե ԴԵՊԻ ԿՈՄՈՒՆԻՋՄՏ ԱՆՈՂ ՈՒՂԻՆ ՅԵՎ ԻՆՁ Ե ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ

Կոմունիստական հասարակակարգը պիտի գա փոխա-
րինելու Խորհրդային պետությանը: Խորհրդային պետու-
թյան իշխանության գլխին կոմունիստական կուսակցու-
թյան ղեկավարությունը կանգնած է բանվոր դասակարգը,
այստեղ տակավին գոյություն ունեն հասարակական այլ

դասակարգեր, տեղի չեն ունենում (չնայելով այլ ձևով,
քան կապիտալիստական հասարակակարգում) դասակար-
գային կռիվներ, պահպանվում է պետական իշխանությու-
նը (պրոլետարիատի դիկտատուրայի ձևով) և մասնավոր
սեփականությունը:

Բազմաթիվ յերկրներում խորհրդային իշխանության
աստիճանական իրականացմամբ և բանվոր դասակարգի
իշխանության վերջնական ամրապնդմամբ, սոցիալիստա-
կան Խորհրդային հանրապետությունների Միությունը
կաճի և նրա մեջ մտնող պետութայունների տնտեսական
համագործակցությունը ավելի ու ավելի կը զար-
գանա: Այդ միասնական աշխատանքի շնորհիվ նրա մեջ
մտնող առանձին մասերի տնտեսական զարգացումը ա-
ռաջ կը գնա ավելի արագ թափով:

Ամենակարող տեխնիքայի ազդեցությամբ, վորին
ամբողջովին տիրապետում է բանվորությունը և վորը
մատչելի չէ դառնալու մանր տնտեսություններին, կո-
մունիզմի ճանապարհից (պրոլետարիատի կողմից իշխանու-
թյունը գրավելուց հետո) չքանալու չէ այդ վերջին խո-
շրնդոտն ևս, և ֆուցած դասակարգերի՝ բանվորության
ու գյուղացիության միջև ստեղծվելու չէ աշխատավոր-
նեի մի միաձույլ դասակարգ: Այս հողի վրա չեյ աստի-
ճանաբար տեղի կունենա մասնավոր սեփականության,
դասակարգի, ապա նաև պետության չքացումը:

Այսպիսով կոմունիստական հասարակակարգում տրն-
տեսության և արտադրության բոլոր միջոցները պատկա-
նելու չեն վոչ թե մասնավոր մարդկանց կամ առանձին
խմբերի, այլ գտնվելու չեն ամբողջ հասարակության
տակ: Բոլոր ասպարեզներում մեքենա-
տության բոլոր ցուցմունքներով տնտեսությունն ու աշ-
խատանքը կազմակերպվելու չէ հասարակական հիմունք-
ներով: Յուրաքանչյուր աշխատավորի աշխատանքի տե

ստիկ ազատ ընտրութեան իրավունք կը տրվի և յուրա-
քանչյուր վոք կաշխատի իր ընդունակութեանները և
ուժերը չափ ու այնքան, վորքան ինքն այդ կը ցանկա-
նաւ: Բոլորի աշխատանքի արդյունքներն ու մթերքները
պատկանելու յեն ամբողջ հասարակութեանը, և բոտ պա-
հանջի, հասարակութեան յուրաքանչյուր անդամին ամեն
ինչով բավարարելով, այդ մթերքները բաժանվելու յեն
նրա բոլոր անդամների միջև:

60. ՎՈՐՆ Ե ԿՈՄՈՒՆԻՍՏ—ԲԱՆՎՈՐԻ ԴԵՐԸ ԿՈՄՈՒՆԻՋՍՏԻ ՆԱՍԱՐ ՄՂԱՄ ՊԱՅԲԱՐՈՒՄ

Տակավին համաշխարհային բանվորութեան ու աշխա-
տավորութեան փոքրամասնութեանն և միայն, վոր Կո-
մունիստական Ինտերնացիոնալի գրոշակի տակ պայքա-
րում է: Կոմիւնալներն իր շարքերում համախմբում է բան-
վորութեան միայն ավելի առաջադեմ, գիտակից և հեղա-
փոխական մասը:

Յոգ Կոմունիստական Ինտերնացիոնալը, հետեւելով
Կ. Մարքսի և Վ. Ի. Լենինի ուսմունքին, գտնում է, վոր
հեղափոխութեան հաջողութեանն այն չէ, վորպեսզի Կո-
մունիստական Ինտերնացիոնալի մեջ ժամի ու համա-
խմբվի ամբողջ բանվորութեանը: Կապիտալիզմի տիրա-
պետութեան ժամանակ այդ նույնիսկ անհնարին է: Գրե-
խավոր նպատակը պիտի լինի այն, վոր մտածված, ուղիղ
քաղաքականութեամբ ու զործելակերպով կոմունիստական
կուսակցութեան ազդեցութեանը տարածվի միլիոնավոր
ու տասնյակ միլիոնավոր բանվորութեան ու այլ աշխա-
տավոր մասսաների վրա, վոր նրանց իր հետեւից տանի և
ղեկավարի կապիտալիստների ու կազմածատերերի դեմ
նրանց մղած պայքարը:

Սակայն կապիտալի դեմ ուղղված պայքարը կարելի
յեղեկավարել միայն կովին մասնակցելով, միայն առա-

ջին շարքերում լինելով և բոլոր թույլերին ու հետ մնա-
ցողներին որինակ լինելով՝ ցույց տալով թե հաղթելու
համար ի՞նչպիսի պիտի կովել, ինչպես պիտի հարմարվել,
վորպեսզի մասնակի ու ժամանակավոր պարտութեան-
ներն ու անհաջողութեանները սգաագործվեն վերջնական
հաղթանակի համար:

Կոմիւնալները, հենված Կ. Մարքսի և Վ. Ի. Լենինի
ուսմունքի վրա, այդ ուղիով ել առաջ և ընթանում: Նա
իր ունեցած միլիոնավոր կազմակերպված բանվորութեան
կազմով, ամենուրեւ իր պայքարների ճանապարհով առաջ
ե ընթանում դեպի իր վերջնական նպատակի իրագոր-
ծումը, ավելի ու ավելի կազմակերպելով ու իր շուրջը
համախմբելով առաջադեմ հեղափոխական մասսաներին:
Նա գտնել պահանջող կովի է մղում, վորովհետեւ գիտե
(այդ նրան ուսուցել են և Մարքսը, և Լենինը), վոր ա-
ռանց աշխատավորութեան կողմից գտնել տալու, հնարա-
վոր չէ կապիտալիզմը՝ տալու և կոմունիստական հա-
սարակարգ կառուցել: Յեւ յուրաքանչյուր կոմունիստ-
ական կուսակցութեան շարքերում կովելով, քաջ
առ քաջ գտնում է դեպի Կոմիւնալների վերջնական
նպատակը, դեպի կոմունիստական հասարակարգի կա-
ռուցումը:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Յ Ո Ւ Ն

1. Ի՞նչպես և կոչվում այն պետությունը, վորի մեջ մենք աշխատում ենք:
2. Ո՞վ և կառավարում Խորհրդային պետությունը:
3. Ու՞մից և բաղկացած Ռ. Կ. Կ. (Բ):
4. Վո՞ր դասակարգին ղեկավարելով կոմունիստական—բոլշևիկական կուսակցությունը տանում և իր պայքարը:
5. Ի՞նչպես են վերաբերվում բոլշևիկները աշխատավոր գյուղացիության:
6. Ի՞նչպես կազմակերպվեց ու զարգացավ Ռ. Կ. Կ. (Բ):
7. Ի՞նչ սկզբունքների վրա յն կառուցված Ռ. Կ. Կ. (Բ):
8. Ի՞նչպիսի ճանապարհով Ռ. Կ. Կ. (Բ) կառավարական կուսակցություն դարձավ:
9. Ի՞նչ եր Հոկտեմբերյան հեղափոխությունը:
10. Վո՞ր հեղափոխությունն և կոչվում պրոլետարական:
11. Ի՞նչ և պրոլետարիատի զիկտատուրան:
12. Ի՞նչպիսի դժվարություններ ու խոչընդոտներ կալին յեվ մասամբ շարունակում են լինել մեր կուսակցության առաջ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո:
13. Ի՞նչ և շահել մեր կուսակցությունը Խորհրդային իշխանության 6 տարվա գոյություն ընթացքում:
14. Վո՞րն և մեր կուսակցության յեվ Խորհրդային իշխանության արտաքին քաղաքականությունը:
15. Վո՞րն և մեր կուսակցության յեվ Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը:
16. Ի՞նչ մասերից և կազմված Ս. Խ. Հ. Միությունը:
17. Յե՞րբ յեվ ինչո՞ւ կազմվեց Ս. Խ. Հ. Միությունը:
18. Վո՞րոնք են Ս. Խ. Հ. Միության մեջ յեվ մյուս Խորհրդային հանրապետություններում իշխանության քաղաքական որդանները:

19. Ի՞նչպիսի ազդեցությունն է թողել մեր կուսակցության ազգային քաղաքականությունը խորհրդային հանրապետությունն ազդեցության կազմի վրա:
20. Ի՞նչպես են բանվորներն ու գյուղացիները մասնակցում խորհրդային հանրապետության իշխանության որդաների ստեղծելուն:
21. Ի՞նչպիսի քաղաքականությունն է վարում մեր կուսակցությունը խորհրդային հանրապետության ամրապնդման յեվ տնտեսության հառաջդիմության համար:
22. Վո՞րն է նոր տնտեսական քաղաքականության ելությունը:
23. Ի՞նչ նշանակությունն է տալիս մեր կուսակցությունը նոր տնտեսական քաղաքականությանը:
24. Ի՞նչպիսի վտանգների հետ է կապված նոր տնտեսական քաղաքականությունը:
25. Ի՞նչպես է մեր կուսակցությունը պայքարում նոր տնտեսական քաղաքականության վտանգների դեմ:
26. Վո՞րո՞նք են նոր տնտեսական քաղաքականության դրական հետեվանքները:
27. Վո՞րն է մեր կուսակցության առաջիկա զլխավոր խնդիրը տնտեսական կյանքի բնագավառում:
28. Վո՞րն է մեր կուսակցության քաղաքականությունը գյուղատնտեսության բնագավառում:
29. Վո՞րն է մեր կուսակցության քաղաքականությունը արդյունաբերության բնագավառում:
30. Վո՞րն է մեր կուսակցության քաղաքականությունը ֆինանսական բնագավառում:
31. Վո՞րն է մեր կուսակցության քաղաքականությունը առեվտրի բնագավառում:
32. Վո՞րն է մեր կուսակցության քաղաքականությունը կոոպերացիայի ասպարեզում:
33. Վո՞րն է մեր կուսակցության քաղաքականությունը բանվորական հարցում:
34. Ի՞նչպիսի նշանակությունն է տալիս մեր կուսակցությունը Ս. Խ. Հ. Միության մեջ կատարված շինարարական նվաճումներին:
35. Վո՞րն է մեր կուսակցության ունեցած նշանակությունը համաշխարհային բանվորական շարժման մեջ:
36. Ի՞նչպես է մեր կուսակցությունը իրականացում համաշ-

- խարհային բանվորական շարժման հետ ունեցած իր կապերը:
37. Ի՞նչ է Կոմունիստական III Ինտերնացիոնալը (Կոմինտերնը):
38. Յե՞րբ ստեղծվեց III Ինտերնացիոնալը:
39. Ո՞ւմնից է կազմված III Ինտերնացիոնալը:
40. Վո՞րն է III Ինտերնացիոնալի գործելակերպը:
41. Վո՞րո՞նք են III Ինտերնացիոնալի առաջ դրված զլխավոր հարցերը:
42. Ի՞նչ սկզբունքներով է կազմակերպված III Ինտերնացիոնալը:
43. Ի՞նչու բոլոր յերկրների բանվորների համար կապիտալիզմի դեմ պայքարելը անխուսափելի յն:
44. Ի՞նչ նախապահով բանվոր դասակարգը կարող է ազատագրվել կապիտալի իշխանությունից:
45. Վո՞ր դասակարգի դաշնակցությամբ յեվ վո՞ր դասակարգերի դեմ պիտի պայքարեն բոլոր յերկրների բանվորները:
46. Կապիտալին հաղթելու համար բանվոր դասակարգի ծեռքում ի՞նչն է հանդիսանում անհրաժեշտ զենք:
47. Ո՞ւմ դեմ պիտի կռվեն բանվորները կապիտալիզմը տապալելու համար:
48. Ի՞նչ է II Ինտերնացիոնալը:
49. Ի՞նչ է Ամստերդամի Արհմիությունների Ինտերնացիոնալը:
50. Կոմինտերնի հետ միասին ել ի՞նչ միջազգային կազմակերպություններ են պայքարում:
51. Ի՞նչ է Պրոֆինտերնը:
52. Ի՞նչ է միջազգային Գյուղացիական Խորհուրդը:
53. Ի՞նչ է Յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալը:
54. Վո՞րո՞նք են Կոմինտերնի տվյալները բանվորական հեղափոխության զարգացման յեվ հաղթանակի նկատմամբ:
55. Համաշխարհային հեղափոխության յեվ Կոմունիզմի համար Կոմինտերնը կապիտալիզմի դեմ մղած իր պայքարում ի՞նչ ուսմունքի վրա է հենվել:
56. Ի՞նչ է Կ. Մարքսի ուսմունքի ելությունը:
57. Ի՞նչ է Վ. Ի. Լենինի ուսմունքի ելությունը:
58. Վո՞րն է Կոմինտերնի վերջնական նպատակը:
59. Վո՞րն է զեպի կոմունիզմը տանող ուղին յեվ ի՞նչ է Կոմունիստական հասարակարգը:
60. Վո՞րն է Կոմունիստ-բանվորի դերը Կոմունիզմի համար մղված պայքարում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0187089

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.



81.0
90-1